

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԱՄԱՎԱՐԱԿՈՎ (COVID-19)
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....7

ԱՄՓՈՓԱԳԻՐ8

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....12

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ17

 Հաշվեքննության հարց – 1. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացում ապահովվել է հատուցման դիմաց արժեքի (value for money) բավարար մակարդակ17

 Հաշվեքննության ենթահարց – 1.1. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացն իրականացվել է տնտեսող կերպով17

 Հաշվեքննության ենթահարց – 1.2. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացն իրականացվել է ծախսարդյունավետ կերպով.....20

 Հաշվեքննության ենթահարց – 1.3. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացն իրականացվել է նպատակային արդյունավետ կերպով.....23

 1.3.1. Շահառուների շրջանակի վերաբերյալ.....23

 1.3.2. Ոչ ֆինանսական չափորոշիչների բացակայության վերաբերյալ.....26

 Հաշվեքննության հարց – 2. Արդյո՞ք Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը եղել են արդյունավետ՝ երաշխավորելու համար բյուջետային ծրագրերի արդյունավետ իրականացում և արժանահավատ հաշվետվողականություն28

 Հաշվեքննության ենթահարց – 2.1. Արդյո՞ք ներդրված են եղել ֆինանսական կառավարման և հսկողության բավարար համակարգեր ու գործընթացներ.....28

 2.1.1. Մեկուսացված անձանց քանակի նկատմամբ հսկողության վերաբերյալ28

 2.1.2. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի նկատմամբ հսկողության համակարգի վերաբերյալ30

 Հաշվեքննության ենթահարց – 2.2. Արդյո՞ք ներդրված ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը գործել են արդյունավետ..... 31

 2.2.1. Հանձնում-ընդունումից հետո տրամադրված դրական եզրակացություններ32

2.2.2. Վճարումից հետո ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություններ 32

2.2.3. Վճարումից հետո տրամադրված դրական եզրակացություններ..... 34

2.2.4. Առանց դրական եզրակացության վճարումներ 35

2.2.5. Ուշացումով վճարումներ 37

2.2.6. Ծառայության կատարման արդյունքների մասին հաշվետվությունների և դրանցում առկա վավերապայմանների բացակայության վերաբերյալ 41

2.2.7. Պայմանագրեր չկնքելու վերաբերյալ..... 42

2.2.8. Պայմանագրի անբաժանալի մասը կազմող համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ..... 43

2.2.9. Գնումների պլանով նախատեսված սահմանաչափերի չպահպանման վերաբերյալ..... 45

Հաշվեքննության ենթահարց – 2.3. Արդյո՞ք հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի կողմից գնահատվել է հաշվեքննության առարկային վերաբերելի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերի արդյունավետությունը..... 45

ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 47

1. Փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի խեղաթյուրման վերաբերյալ..... 47

2. Փաստացի մատուցված ծառայություններից շեղումներով վճարումների վերաբերյալ..... 51

3. Ներկայացման խեղաթյուրման վերաբերյալ..... 55

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 58

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հունվարի 29-ի թիվ 16-Ա որոշում:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

Նոր կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված բյուջետային ծախսերի իրականացում:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Գնումների մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, Ծրագրային բյուջետավորման մեթոդական ուղեցույցներում, Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման վերաբերյալ կառավարության որոշումներում, ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունում, ԷՆ-ի և մատակարարների միջև կնքված պայմանագրերում սահմանված չափանիշներ:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2021թ. փետրվարի 10-ից մինչև 2022թ. փետրվարի 28-ը ներառյալ:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Իրականացվել է կատարողականի հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են գնում, հարցում, արտաքին հաստատում, վերահաշվարկ, վերակատարում, վերլուծական ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) «ISSAI-100-Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները» և «ISSAI-300-Կատարողականի աուդիտի սկզբունքները» միջազգային ստանդարտների համաձայն: Հաշվեքննությունն իրականացվել է *համակարգին միջոցով* մոտեցմամբ:

Հաշվեքննության նպատակն է եղել՝ պարզել, թե արդյո՞ք հաշվեքննության օբյեկտի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը եղել են պատշաճ՝ ապահովելու համար արտակարգ իրավիճակում ծրագրերի տնտեսող, ծախսարդյունավետ և նպատակային արդյունավետ իրականացում:

Այդ նպատակով առաջադրվել են *հաշվեքննության* հետևյալ *հարցերը*¹

ա. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացում ապահովվել է հատուցման դիմաց արժեքի (value for money) բավարար մակարդակ:

բ. Արդյո՞ք Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը եղել են արդյունավետ՝ երաշխավորելու համար բյուջետային միջոցառումների արդյունավետ իրականացում և արժանահավատ հաշվետվողականություն:

Հաշվեքննության գործընթացը փաստաթղթավորվել է, հաշվեքննողների կողմից կազմվել է հաշվեքննության արձանագրություն, որը սահմանված կարգով ներկայացվել է հաշվեքննության օբյեկտին: Վերջինիս ներկայացրած պարզաբանումները, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով, արտացոլվել են սույն ընթացիկ եզրակացությունում:

*Հաշվեքննության սահմանափակումները*¹

ա. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից չի տրամադրվել հաշվեքննության առարկա հանդիսացած բյուջետային միջոցառումների շահառու կազմակերպությունների հարկային հաշիվների վերաբերյալ Հաշվեքննիչ պալատի հայցած տեղեկատվությունը՝ հղում կատարելով հարկային գաղտնիքին: Արդյունքում, սահմանափակվել է տնտեսական միջոցառումների շահառուների կողմից բյուջետային միջոցների օգտագործման նպատակայնությունը հաշվեքննելու հնարավորությունը:

բ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից մեկուսացված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ծածկագրված՝ անհատական տվյալների պաշտպանության նկատառումով: Մեկուսացված անձանց վերաբերյալ միասնական տվյալների բազան բացակայել է: Երկու տարբեր աղբյուրներում պարունակվող տեղեկատվության համակցումը խնդրահարույց է դարձրել տվյալների ամբողջականությունը: Ներկայացված տվյալների բազայում առկա են եղել բազմաթիվ բացակայող տվյալներ, կրկնողություններ, անճշտություններ: Նշված թերությունները սահմանափակող ազդեցություն են գործել հաշվեքննության արդյունքների որակի վրա:

գ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից չեն պահպանվել Հաշվեքննիչ պալատի հարցումներին պատասխանելու և հաշվեքննության արձանագրությանն արձագանքելու վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետները, որի հետևանքով ձգձգվել են

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

նաև հաշվեքննության գործընթացները, այդ թվում՝ սույն ընթացիկ եզրակացության հաստատումը:

Հաշվեքննությունն իրականացվել է Հաշվեքննիչ պալատի մեթոդաբանության, վերլուծության և միջազգային կապերի վարչության կողմից, որի աշխատանքները համակարգել է Հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Առուստամյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՀԿ** – Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
- ԱԶ** – Անհատ ձեռնարկատեր
- ԱՆ** – Առողջապահության նախարարություն
- ԲԲԸ** – Բաց բաժնետիրական ընկերություն
- ԲԿ** – Բժշկական կենտրոն
- ԶԿ** – Զբոսաշրջության կոմիտե
- ԷՆ** – Էկոնոմիկայի նախարարություն
- ՀՊ** – Հաշվեքննիչ պալատ
- ՀՀ** – Հայաստանի Հանրապետություն
- ՊԵԿ** – Պետական եկամուտների կոմիտե
- ՍՊԸ** – Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՈւՎԿ** – Ունիվերսալ վարկային կազմակերպություն
- ՓԲԸ** – Փակ բաժնետիրական ընկերություն
- COVID-19** - Նոր կորոնավիրուսային համավարակ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

COVID-19-ը մեծ մարտահրավեր էր Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական կառավարման և ներքին հսկողության համակարգերի համար:

Համավարակով պայմանավորված երկու հիմնական միջոցառումներ վերապահվել էին Էկոնոմիկայի նախարարությանը, որոնցից մեկը ենթադրում էր՝ ապահովել կորոնավիրուսով պայմանավորված մեկուսացված անձանց կեցությունը, իսկ մյուսը՝ սուբսիդավորել վարկերի տոկոսադրույքները:

Չնայած աշխատանքային բարդ պայմաններին, Նախարարությունը կարողացել է կատարել իրեն վերապահված միջոցառումները: Այնուհանդերձ, հաշվեքննությունը ցույց տվեց, որ որոշ էական գործընթացների նկատմամբ հսկողության համակարգեր ներդրված չեն եղել, իսկ որոշ ներդրված համակարգեր էլ բավարար արդյունավետ չեն գործել: Արդյունքում, ծագել են Նախարարության կողմից տնտեսման, ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքների չպահպանման փաստեր, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների շուրջ 3.4 մլրդ դրամի չափով խեղաթյուրումներ:

Մասնավորապես, Էկոնոմիկայի նախարարությունը վճարել է ավելի շատ հյուրանոցային և սննդի ծառայությունների դիմաց, քան Առողջապահության նախարարության տվյալների համաձայն, տվյալ մեկուսացման վայրում մեկուսացված անձինք են եղել:

Արձանագրվել է, որ մեկուսացվածներին մատուցված սննդի ծառայությունների գների միջև առկա են եղել էական՝ եռապատիկի հասնող տարբերություններ (նախաճաշի գները տատանվել են 500-ից 1800դր. միջակայքում, ճաշի գները՝ 1000-ից 3000դր., ընթրիքի գները՝ 720-ից 2000դր.):

Բացի այդ, երկու ամիս շարունակ Նախարարությունը, հաշվի չառնելով, թե որքան է եղել մեկուսացման իրական կարիքը, հյուրանոցներին է վճարել շուրջ 907 մլն դրամ, այդ թվում՝ վճարելով ազատ մնացած սենյակների դիմաց:

Արձանագրվել է նաև, որ Նախարարությունը շուրջ 2.7 մլրդ դրամի չափով ֆինանսավորել է բյուջետային միջոցառմամբ չնախատեսված շահառուների կեցությունը:

Եվ վերջապես, Նախարարությունը շուրջ 2.3 մլրդ դրամի չափով սուբսիդավորել է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքները՝ չպահպանելով վարկային միջոցների նկատմամբ եռամսյակային մոնիթորինգ իրականացնելու վերաբերյալ Կառավարության սահմանած պահանջը:

Հաշվեքննիչ պալատն առաջարկում է Էկոնոմիկայի և Առողջապահության նախարարություններին ստեղծել համատեղ հանձնաժողով՝ պարզելու համար

Առողջապահության նախարարության տեղեկատվական շտեմարաններում առկա մեկուսացվածների թվի և Էկոնոմիկայի նախարարության կողմից հարկային հաշիվներով վճարված սննդի և հյուրանոցային ծառայություններ ստացած անձանց թվի միջև արձանագրված շեղումների պատճառները:

Հսկողական համակարգերի զարգացման նպատակով Հաշվեքննիչ պալատն առաջարկել է նաև Էկոնոմիկայի նախարարությանը՝ ներդնել մոնիթորինգի և ներքին աուդիտի գործառույթներ, իսկ Առողջապահության նախարարությանը՝ մշակել համաճարակային իրավիճակով պայմանավորված մարդկանց մեկուսացման գործողությունների պլան՝ առավել արդյունավետորեն դիմագրավելու համար ապագա հնարավոր ճգնաժամերին:

Հաշվեքննության արդյունքներն ու Հաշվեքննիչ պալատի առաջարկություններն առավել մանրամասն ներկայացվում են սույն ընթացիկ եզրակացության հաջորդող բաժիններում:

Հաշվեքննության առարկային առնչվող ուշագրավ փաստեր

**1
ՄԱՐՏ**

ՀՀ-ում հայտարարվեց կորոնավիրուսի առաջին դեպքի մասին:

**11
ՄԱՐՏ**

ԱՀԿ-ն COVID-19-ով պայմանավորված իրավիճակը հայտարարեց որպես համավարակ:

**12
ՄԱՐՏ**

ՀՀ կառավարությունը սահմանեց COVID-19-ով պայմանավորված գնումների իրականացման առանձնահատուկ գործընթացներ¹:

**16
ՄԱՐՏ**

ՀՀ-ում հայտարարվեց արտակարգ դրություն, որը ենթադրում էր նաև մեկուսացումների իրականացում²:

**26
ՄԱՐՏ**

ՀՀ ԷՆ-ին հանձնարարվեց հյուրանոցների սեփականատերերի հետ բանակցություններ վարել կորոնավիրուսով վարակված, սակայն ոչ ծանր հիվանդներին հյուրանոցներ տեղափոխելու վերաբերյալ³:

ՀՀ կառավարությունը հաստատեց կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը, որի նպատակն էր՝ օժանդակել առանձին տնտեսավարողներին՝ մեղմելու կորոնավիրուսի տարածման հետևանքով վերջիններիս մոտ կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով⁴:

**28
ՄԱՐՏ**

ՀՀ պետական բյուջեում իրականացված վերաբաշխման արդյունքում ներդրվեց նոր միջոցառում՝ «1224-11001 Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում»⁵ որի կատարող և պատասխանատու գերատեսչությունը սահմանված է ԷՆ-ն:

**31
ՄԱՐՏ**

ՀՀ պետական բյուջեում իրականացված վերաբաշխման արդյունքում ներդրվեց նոր միջոցառում՝ «1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19)

¹ ՀՀ կառավարության 12.03.20թ. N296-Ա որոշում:

² ՀՀ կառավարության 16.03.20թ. N298-Ն որոշում:

³ Քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, 26.03.20թ. N26:

⁴ ՀՀ կառավարության 26.03.2020թ. N 355-Լ որոշում:

⁵ ՀՀ կառավարության 28.03.20թ. N388-Ն որոշում:

տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում»⁶ որի կատարող և պատասխանատու գերատեսչությունը սահմանված է ԷՆ-ն:

2020 թվականի ընթացքում՝

- Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման միջացառման շրջանակներում հյուրանոցային, սննդի և տրանսպորտային ծառայություններ մատուցած 62 կազմակերպություններին վճարվել է 4,566,972.3 հազ. դրամ:

- Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում 17 ֆինանսական կազմակերպությունների միջոցով տնտեսվարողներին տրամադրվել է 2,318,075.4 հազ. դրամի օժանդակություն՝ որպես վարկային տոկոսադրույքի սուբսիդավորում:

⁶ ՀՀ կառավարության 31.03.20թ. N419-Ն որոշում:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին ԱՀԿ-ի կողմից աշխարհում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված իրավիճակը որպես համավարակ հայտարարելուց կարճ ժամանակ անց, Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն, որը ենթադրում էր իրավիճակից բխող արտակարգ միջոցառումների իրականացում: Երկու հիմնական միջոցառումներ վերապահվեցին ՀՀ ԷՆ-ին, որոնցից մեկը ենթադրում էր՝ ապահովել կորոնավիրուսով պայմանավորված մեկուսացված անձանց կեցությունը, իսկ մյուսը՝ սուբսիդավորել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքները: Առաջին միջոցառման շրջանակներում 2020թ. ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներից կատարվեց 4.6 մլրդ դրամի չափով ծախս, իսկ երկրորդի շրջանակներում՝ 2.3 մլրդ դրամի չափով:

Հաշվի առնելով հանրային լայն հետաքրքրությունները, Հաշվեքննիչ պալատը 2021 թվականին սկսեց իրականացնել ՀՀ ԷՆ-ի կողմից նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված բյուջետային ծախսերի հաշվեքննությունը՝ նպատակ ունենալով պարզել, թե արդյո՞ք հաշվեքննության օբյեկտի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը եղել են պատշաճ՝ ապահովելու համար արտակարգ իրավիճակում ծրագրերի տնտեսող, ծախսարդյունավետ և նպատակային արդյունավետ իրականացում:

Հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ որոշ էական գործընթացների նկատմամբ հսկողության համակարգեր ներդրված չեն եղել...

- Մասնավորապես՝
- ❖ ԷՆ-ն չի ներդրել մեկուսացված անձանց քանակների նկատմամբ հսկողության ինքնուրույն համակարգ, այլ բավարարվել է միայն ԱՆ-ի պատասխանատուների կամ բժշկական կենտրոնների ներկայացրած տեղեկատվությամբ՝ չունենալով դրանց արժանահավատությունը պարզելու գործիքակազմ,
 - ❖ ԷՆ-ն չի ներդրել մեկուսացված անձանց մատուցված նախաճաշի, ճաշի և ընթրիքի ծառայությունների գների և քանակների նկատմամբ հսկողության համակարգ,
 - ❖ չնայած ՀՀ-ում գործում է ծրագրային բյուջետավորման համակարգը, որը ենթադրում է արդյունքին միտված բյուջետավորում, կորոնավիրուսով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման բյուջետային միջոցառման գծով արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչներ չեն սահմանվել,

որի արդյունքում հնարավոր չի եղել ապահովել տվյալ միջոցառման շրջանակներում պետական միջոցների ծախսման նպատակային արդյունավետության և հաշվետվողականության նկատմամբ պատշաճ հսկողություն,

- ❖ կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառման շրջանակներում տրամադրված օժանդակության գործիքի նկատմամբ ՀՀ կառավարության սահմանած եռամսյակային մոնիթորինգի գործառույթն էՆ-ն չի իրականացրել,
- ❖ հաշվետու ժամանակահատվածում էՆ-ում չի գործել ներքին աուդիտի գործառույթ:

...իսկ որոշ ներդրված ֆինանսական կառավարման և հսկողության համակարգեր ոչ բավարար արդյունավետությամբ են գործել...

Մասնավորապես, ներդրված հսկողության համակարգը ենթադրել է՝
ա. մատուցված մեկուսացման ծառայությունների վերաբերյալ էՆ ԶԿ-ի կողմից դրական եզրակացության տրամադրում,

բ. դրական եզրակացության հիման վրա՝ մատուցված ծառայությունների ընդունում էՆ-ի կողմից՝ հանձնման-ընդունման արձանագրությունների ստորագրմամբ,

գ. ընդունված ծառայությունների դիմաց վճարումների իրականացում էՆ-ի կողմից (դրական եզրակացությունը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում):

Մինչդեռ, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ՝

- ❖ 1,269,080.0 հազ. դրամի չափով 130 գործարքների դեպքում մատակարարների հետ էՆ-ն չի կնքել գրավոր պայմանագրեր,
- ❖ 82,003.6 հազ. դրամի չափով 7 գործարքների դեպքում⁷ վճարումներն իրականացվել են՝ առանց հանձնման-ընդունման արձանագրություն և դրական եզրակացություն կազմելու,
- ❖ 1,245,690.4 հազ. դրամի չափով 140 գործարքների դեպքում 30 մատակարար կազմակերպությունների հետ հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվել և նրանց մատուցած ծառայությունները էՆ-ի կողմից ընդունվել են ավելի վաղ, քան էՆ ԶԿ-ի կողմից դրական եզրակացությունների տրամադրումը: Այլ կերպ ասած, հանձնման-ընդունման արձանագրության կազմման պահին էՆ ԶԿ-ի կողմից ստորագրված դրական եզրակացությունը բացակայել է:

⁷ 2020 թվականի հունիսի 4-ից հետո ընկած ժամանակահատվածում:

- Մինչդեռ, հանձնման-ընդունման արձանագրություններում նշվել է, որ ընդունող կողմը՝ ԷՆ-ն ընդունում է մատուցված ծառայությունները՝ հիմք ընդունելով ԷՆ ԶԿ-ի դրական եզրակացությունը,
- ❖ 46,724.9 հազ. դրամի չափով 7 գործարքների դեպքում հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվել են հանձնվող/ընդունվող ծառայությունների դիմաց ԷՆ-ի կողմից վճարումը արդեն իսկ կատարված լինելուց հետո,
 - ❖ 492,954.7 հազ. դրամի չափով 58 գործարքների դեպքում ԷՆ-ն մատակարար կազմակերպություններին վճարումները կատարել է ԷՆ ԶԿ-ի կողմից դրական եզրակացության տրամադրումից 8 և ավելի (ընդհուպ մինչև՝ 37) աշխատանքային օր անց: Եվ դա այն պայմաններում, երբ 140,644.3 հազ. դրամի չափով 11 գործարքների դեպքում ԷՆ-ն մատակարարներին վճարումները կատարել է կանխավճարով, այսինքն՝ մատակարարների կողմից դեռևս ծառայություններ մատուցած չլինելու պայմաններում (ընդ որում՝ սույն բյուջետային միջոցառման շրջանակներում որևէ իրավական ակտով կանխավճարի պայման նախատեսված չի եղել),
 - ❖ 498 հարկային հաշիվներից 132-ն ԷՆ-ի կողմից ընդունվել են առանց արդյունքի կատարման հաշվետվությունների, իսկ մնացած 366 հարկային հաշիվներին կից ներկայացված արդյունքի կատարման հաշվետվությունները չեն բավարարել սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերին ՀՀ օրենսդրությամբ վերագրվող վավերապայմաններին,
 - ❖ մատուցված հյուրանոցային ծառայությունների ծավալը գերազանցել է գնումների պլանով նախատեսված սահմանաչափը 25,587.0 հազ. դրամի չափով:

...որի հետևանքով Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված բյուջետային միջոցառումների գծով ծագել են տնտեսման, ծախսային և նպատակային արդյունավետության սկզբունքների չպահպանման փաստեր...

Մասնավորապես՝

- ❖ ԷՆ-ի կողմից մեկուսացված անձանց քանակների նկատմամբ արդյունավետ հսկողության համակարգի բացակայության պայմաններում, ԱՆ-ից ստացված մեկուսացված անձանց քանակի և ԷՆ-ի կողմից հարկային հաշիվներով վճարված սննդի և հյուրանոցային ծառայություններ ստացող անձանց քանակի միջև արձանագրվել են 187,934.3 հազ. դրամի չափով 10,225 հատ հյուրանոցային ծառայությունների և 23,385 հատ սննդի ծառայությունների շեղումներ: Այսինքն, ԷՆ-ն վճարել է ավելի շատ հյուրանոցային և սննդի ծառայությունների

դիմաց, քան ԱՆ-ի տվյալների համաձայն, տվյալ մեկուսացման վայրում մեկուսացված անձինք են եղել,

- ❖ շահառուների միևնույն խմբին մատուցված միևնույն ծառայությունների գների միջև առկա են եղել էական՝ եռապատիկի հասնող տարբերություններ: Մասնավորապես, մեկուսացված անձանց սննդի ապահովման համար ԷՆ-ի կողմից մատակարարներին վճարված նախաճաշի գները տատանվել են 500-ից 1800 դրամի միջակայքում, ճաշի գները՝ 1000-ից 3000 դրամի, իսկ ընթրիքի գները՝ 720-ից 2000 դրամի,
- ❖ երկու ամիս շարունակ (27.03.2020-31.05.2020թթ. ընկած ժամանակահատվածում) ԷՆ-ն մեկուսացման գործընթացն իրականացրել է հյուրանոցներն ամբողջությամբ վարձակալելով՝ առանց հաշվի առնելու, թե որքան է եղել մեկուսացման իրական կարիքը և մեկուսացված անձանց փաստացի թվաքանակը: Այդ եղանակով, ԷՆ-ն հյուրանոցային ծառայություններ մատուցած կազմակերպություններին է վճարել 906,703.6 հազ. դրամ գումար, այդ թվում՝ վճարելով ազատ մնացած սենյակների դիմաց,
- ❖ իրականացվել է նախաճաշից ավելի քան 100,000 հատով և ընթրիքից ավելի քան 50,000 հատով ավելի ճաշի տրամադրում, որի անհրաժեշտությունը հիմնավորող որևէ պարզաբանում ԷՆ-ն չի ներկայացրել,
- ❖ ԷՆ-ի կողմից ֆինանսավորվել են ոչ միայն մեկուսացված անձանց կեցության ծախսերը, այլ նաև՝ բուժանձնակազմի և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված պացիենտների կեցության ծախսերը՝ հանգեցնելով 2,659,481.5 հազ. դրամի չափով ծախսերի նպատակային անարդյունավետության առաջացման:

Առավել մանրամասն տե՛ս կատարողականի հաշվեքննության արդյունքներ բաժինը:

...ինչպես նաև Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական հաշվետվություններում արձանագրվել են 3,363,360.4 հազ. դրամի չափով խեղաթյուրումներ:

Մասնավորապես՝

- ❖ ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվություններում (<-2 և <-4) փաստացի ծախսերը և կրեդիտորական պարտքերը խեղաթյուրված են եղել 692,349.7 հազ. դրամի չափով,

- ❖ փաստացի մատուցված ծառայություններից շեղումներով իրականացված վճարումների արդյունքում «1224-11001» միջոցառման գծով արձանագրվել են 11,529.2 հազ. դրամի չափով խեղաթյուրումներ,
- ❖ ոչ միայն մեկուսացված անձանց, այլև՝ բուժանձնակազմի և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված պացիենտների կեցության ծախսերի ֆինանսավորման արդյունքում ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվությունում առկա է եղել 2,659,481.5 հազ. դրամի չափով ներկայացման խեղաթյուրում: Առավել մանրամասն տե՛ս խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ բաժինը:

նը:

Կարեն Առուստամյան
 Հաշվեքննիչ պալատի անդամ
 25 փետրվարի, 2022 թվական
 ՀՀ հաշվեքննիչ պալատ
 Բաղրամյան 19, ք. Երևան
 Հայաստանի Հանրապետություն

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվեքննության հարց – 1. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացում ապահովվել է հատուցման դիմաց արժեքի (value for money) բավարար մակարդակ

Հաշվեքննության ենթահարց – 1.1. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացն իրականացվել է տնտեսող կերպով

Հաշվեքննության չափանիշ

Գնումների գործընթացը պետք է բավարարի հատուցման դիմաց արժեքի ապահովման նպատակին, որը ենթադրում է նաև գնումների և գնումների գործընթացի **տնտեսող** իրականացում («Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը):

Հաշվեքննության արդյունքներ


Հաշվեքննությամբ պարզվել է, որ շահառուների միևնույն խմբին մատուցված միևնույն ծառայությունների գների միջև առկա են եղել էական՝ եռապատիկի հասնող տարբերություններ (Հավելված 1):

Մասնավորապես, «Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում» բյուջետային միջոցառման շրջանակներում մատուցված


- **նախաճաշի** գների միջև առկա են եղել էական տարբերություններ՝ տատանվելով 500-ից 1800 դրամի միջակայքում,
- **ճաշի** գների միջև առկա են եղել էական տարբերություններ՝ տատանվելով 1000-ից 3000 դրամի միջակայքում,
- **ընթրիքի** գների միջև առկա են եղել էական տարբերություններ՝ տատանվելով 720-ից 2000 դրամի միջակայքում:

ԷՆ-ն Հաշվեքննիչ պալատին հայտնել է, որ հավելյալ վերլուծություն չի իրականացրել, որի արդյունքում հնարավոր կլիներ պարզել, որ նախաճաշի, ճաշի և ընթրիքի արժեքների տարբերությունը կարող էր էական տարբերություն առաջացնել մատուցված ծառայությունների գների մեջ: Իսկ որպես հավելյալ վերլուծության չիրականացման պատճառ նշվել է «աշխատանքային ծանրաբեռնվածությունը»: Արդյունքում, ներքին հսկողության համակարգի նշված թերացման հետևանքով չի պահպանվել կատարողականի հաշվեքննության տնտեսման սկզբունքը:


Մեկուսացված անձանց մատուցված նախաճաշի գնային միջակայքը (500-ից 1800 դրամ)



Մեկուսացված անձանց մատուցված ճաշի գնային միջակայքը (1000-ից 3000 դրամ)



Մեկուսացված անձանց մատուցված ընթրիքի գնային միջակայքը (720-ից 2000 դրամ)



Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով՝ ՀՀ ԷՆ ԶԿ-ի հիմնական կանոնադրական գործառույթների կատարմանը և կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված միջոցառումների շրջանակներում պահանջվող աշխատանքներին զուգահեռ անհնար է եղել իրականացնել նաև հավելյալ վերլուծություն, որի արդյունքում հնարավոր կլիներ պարզել, որ նախաճաշի, ճաշի և ընթրիքի արժեքների տարբերությունը կարող էր էական տարբերություն առաջացնել մատուցված ծառայությունների գների մեջ:

ՀՀ ԷՆ ԶԿ-ի կողմից սննդի մատակարարներից պահանջվել է նախապես ներկայացնել սննդի մատակարարման գնառաջարկ և ճաշացանկ: Պետք է հաշվի առնել, որ մատակարարների կողմից ներկայացված գնառաջարկը կարող էր ներառել նաև ճանապարհաձախսը (եթե մատակարարը չի գործել բժշկական կենտրոնի տարածքում) և սննդի մատակարարման համար անհրաժեշտ պարագաների ծախսը: ԶԿ-ի կողմից որպես պահանջ ներկայացվել է միայն 1 օրվա համար ընդհանուր արժեքի սահմանաչափը, որը 4800 դրամից աստիճանաբար նվազել է՝ հասնելով 4000 դրամի: Յուրաքանչյուր սննդի մատակարար ինքն է որոշել այդ սահմանաչափի շրջանակներում նախաճաշի, ճաշի և ընթրիքի արժեքները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Նախաճաշի, ճաշի և ընթրիքի արժեքների վերաբերյալ ԷՆ-ի կողմից վերլուծություն չիրականացնելը հանդիսացել է ԷՆ-ի ֆինանսական կառավարման համակարգի և ներքին հսկողության թերացում, որի արդյունքում արձանագրվել են էական (եռապատիկ) գնային տարբերություններ՝ հանգեցնելով բյուջետային ծրագրի կատարման ընթացքում տնտեսման սկզբունքի չպահպանման:

Հաշվեքննության ենթահարց – 1.2. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացն իրականացվել է ծախսարդյունավետ կերպով

Հաշվեքննության չափանիշներ

ՀՀ-ում բյուջետային համակարգը, ի թիվս այլոց, հիմնվում է *բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքի* վրա, որը ենթադրում է, որ բյուջեների կազմման և կատարման ժամանակ պետք է ելնել նախատեսված արդյունքի բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ կամ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի հասնելու անհրաժեշտությունից («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի է) կետ, 8-րդ հոդվածի 7-րդ կետ):

Գնումների գործընթացը պետք է բավարարի հատուցման դիմաց արժեքի ապահովման նպատակին, որը ենթադրում է նաև գնումների և գնումների գործընթացի **արդյունավետ** իրականացում («Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):


Հաշվեքննության արդյունքներ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում» բյուջետային միջոցառման շրջանակներում՝

1. Երկու ամիս շարունակ (27.03.2020-31.05.2020թթ. ընկած ժամանակահատվածում) ԷՆ-ն մեկուսացման գործընթացն իրականացրել է հյուրանոցներն ամբողջությամբ վարձակալելով՝ առանց հաշվի առնելու, թե որքան է եղել մեկուսացման իրական կարիքը և մեկուսացված անձանց փաստացի թվաքանակը: Այդ եղանակով, ԷՆ-ն հյուրանոցային ծառայություններ մատուցած կազմակերպություններին է վճարել 906,703.6 հազ. դրամ գումար, այդ թվում՝ վճարելով ազատ մնացած սենյակների դիմաց (Հավելված 2):

2. ԷՆ-ի կողմից մեկուսացված անձանց քանակների նկատմամբ արդյունավետ հսկողության համակարգի բացակայության պայմաններում, ԱՆ-ից ստացված մեկուսացվածների քանակի և ԷՆ-ի կողմից հարկային հաշիվներով վճարված սննդի և հյուրանոցային ծառայություններ ստացող անձանց քանակի միջև արձանագրվել են 187,934.3 հազ. դրամի չափով 10,225 հատ հյուրանոցային ծառայությունների և 23,385 հատ սննդի ծառայությունների շեղումներ: Այսինքն, ԷՆ-ն վճարել է ավելի շատ հյուրանոցային և սննդի ծառայությունների դիմաց, քան ԱՆ-ի տվյալների համաձայն, տվյալ մեկուսացման վայրում մեկուսացված անձինք են եղել (*առավել մանրամասն տե՛ս 2.1.1*):
3. 18 դեպքում հյուրանոցային ծառայություններ ստացած անձանց քանակն էապես գերազանցել է սննդի մատուցման ծառայություններ ստացած անձանց թվին, որի արդյունքում հյուրանոցային ծառայությունների մատուցման արժեքը գերազանցել է 19,013.5 հազ. դրամի չափով ծախսային անարդյունավետություն (*Հավելված 3*):
4. Իրականացվել է նախաճաշից ավելի քան 100,000 հատով և ընթրիքից ավելի քան 50,000 հատով ավելի ճաշի տրամադրում, որի անհրաժեշտությունը հիմնավորող որևէ պարզաբանում ԷՆ-ն չի ներկայացրել (*Հավելված 1*):

Մեկուսացված անձանց մատուցված սննդի ծառայությունների քանակը 2020թ. (հատ)



Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

1. Հաշվի առնելով, որ ծրագրի հիմնական շարժառիթներից էր համավարակի արդյունքում առավել տուժած ոլորտին՝ զբոսաշրջությանն աջակցությունը, և այն, որ հյուրանոցային տնտեսությունները ստեղծված իրավիճակում հյուրանոցում անձանց մեկուսացումից (այդ թվում՝ կամավորության սկզբունքով հյուրանոցում մնացած հյուրանոցի աշխատակիցների, բուժանձնակազմի, ոստիկանության աշխատակիցների և կամավորականների) զատ հյուրանոցային ծառայությունների մատուցում և այլ անձանց սպասարկում իրականացնել անկարող էին՝ սկզբնական

շրջանում նախատեսվում էր հյուրանոցային տնտեսությունների ամբողջական վարձակալում (ինչը շատ դեպքերում նաև հյուրանոցային ծառայություն մատուցող անձանց կողմից հյուրանոց տրամադրելու նախապայմաններից էր)՝ գնառաջարկով ներկայացված պայմաններով: Միաժամանակ, նախնական շրջանում վախի մթնոլորտ էր, ինչի արդյունքում ծագում էին բազմաթիվ խնդիրներ հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց հետ բանակցությունների ընթացքում: Հարկ է նշել, որ սննդի մատակարարումը, աղբահեռացումը և մեկուսացման կազմակերպմանն առնչվող այլ գործողությունները կազմակերպվում էին խիստ հսկողության ներքո՝ օտար անձանց մուտքը հյուրանոց սահմանափակելու միջոցով: Միաժամանակ, հյուրանոցների ընտրության փուլում նախապատվությունը նախնական շրջանում տրվում էր առավել շատ համարներով և բժշկական հաստատություններին առավել մոտ, բնակելի տարածքներից հեռու հյուրանոցների ընտրությանը՝ հաշվի առնելով անձանց մեկուսացման կազմակերպման առանձնահատկությունները և հարմարավետությունը:

2. Նախնական շրջանում իրականացվել է հյուրանոցային տնտեսության օբյեկտների ամբողջական վարձակալություն, որի արդյունքում, անկախ հյուրանոցում մեկուսացված անձանց քանակից, հյուրանոցներին վճարվել է ամբողջ հյուրանոցի վարձակալության արժեքը՝ գնառաջարկին համապատասխան: Միաժամանակ, հաշվետվությունները հիմք են ծառայել սննդի ծառայությունների մատուցման դիմաց հաշվետվություններում նշված անձանց քանակներին համապատասխան վճարումների իրականացման համար:

3. ՀՀ ԷՆ ԶԿ-ն չի տիրապետում նախաճաշից և ընթրիքից ավելի կամ պակաս քանակով ճաշի տրամադրման տեղեկատվությանը, քանի որ սննդի ծառայություններից օգտված անձանց քանակը տեղում ճշտելու կամ գնահատելու ռեսուրսների բացակայության հիմքով ԶԿ-ն դրական եզրակացություն տրամադրել է միմիայն ՀՀ ԱՆ պատասխանատուների կամ բժշկական կենտրոնների կողմից հաստատված հաշվետվությունների հիման վրա, ինչը նախատեսված է մատակարարների հետ կնքված պայմանագրերով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

1. Հաշվեքննության օբյեկտի կողմից առարկություններ չեն ներկայացվել: Բացատրությունն առ այն, որ «ծրագրի հիմնական շարժառիթներից էր համավարակի արդյունքում առավել տուժած ոլորտին՝ զբոսաշրջությանն աջակցությունը», ընդունելի չէ, քանի որ մեկուսացված անձանց կեցության ապահովմանը միտված միջոցառումը ներդրվել և բյուջետային ծախսերն իրականացվել են ոչ թե զբոսաշրջությանն աջակցելու, այլ համավարակի տարածումը սահմանափակելու համար: «Զբոսաշրջությանն աջակցելու» հիմնավորմամբ պետական բյուջեից թափուր սենյակների դիմաց վճարումներ իրականացնելը չի տեղավորվում բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքի շրջանակներում:

2. Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը չի ընդունվել, քանի որ հյուրանոցային տնտեսության օբյեկտների ամբողջական վարձակալություն ԷՆ-ի կողմից իրականացվել է մինչև 31.05.2020թ., մինչդեռ հավելված 3-ում միայն Գ.Հ. ԱԶ-ի ծառայություններն են մատուցվել մինչև 31.05.2020թ., և տվյալ ԱԶ-ին վճարված գումարն իր տեսակարար կշռով ընդհանուրի փոքր մասն է կազմում:

3. Սննդի ծառայություններից օգտված անձանց քանակը տեղում ճշտելու կամ գնահատելու ռեսուրսների բացակայության հիմքով հսկողություն չիրականացնելը բյուջետային միջոցառման միակ պատասխանատու և կատարող գերատեսչության՝ ԷՆ-ի կողմից, հանդիսացել է ԷՆ-ի ֆինանսական կառավարման համակազմի անարդյունավետության դրսևորում, որն առաջացրել է ծախսային անարդյունավետության և խեղաթյուրումների ռիսկեր:

Հաշվեքննության ենթահարց – 1.3. Արդյո՞ք COVID-19-ով պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման գործընթացն իրականացվել է նպատակային արդյունավետ կերպով

1.3.1. Շահառուների շրջանակի վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշներ

Բյուջետային միջոցների *հասցեագրվածության* և *նպատակայնության սկզբունքը* ենթադրում է, որ բյուջետային միջոցներն օրենսդրությանը համապատասխան հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշվածությամբ: Բյուջետային միջոցների հատկացման ժամանակ օրենսդրության շրջանակներից դուրս ցանկացած գործողություն, որը հանգեցնում է բյուջեով նախատեսված միջոցների հասցեագրվածության խախտմանը կամ այդ միջոցների ուղղմանը բյուջեով չնախատեսված նպատակներին, որակվում է որպես օրենսդրության խախտում («ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ մաս):

«1224-11001» բյուջետային միջոցառումը ներդրվել է ՀՀ կառավարության 28.03.20թ. «ՀՀ 2020թ. պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N388-Ն որոշմամբ, որի հիմնավորումներում, մասնավորապես, նշված է՝

- որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է կորոնավիրուսի տարածման կանխարգելման հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների շրջանակում կորոնավիրուսային վարակման **կասկածելի անձանց մեկուսացման** ապահովմամբ,
- կորոնավիրուսային վարակը կանխելու նպատակով վարակված անձի հետ շփման շրջանակում գտնվող անձանց մեկուսացումն և այլ անձանց անվտանգությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ապահովել **մեկուսացվող անձանց** կեցությունը, սնունդն ու խնամքը՝ ներգրավելով հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունում, որպես պատասխանատու և կատարող պետական մարմին՝ ՀՀ ԷՆ-ին վերապահված «1224-11001» միջոցառման՝

- *Անվանումը* սահմանված է, որպես՝ «Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված **մեկուսացված անձանց կեցության** ապահովում»,

- *Նկարագրությունը* սահմանված է՝ «Կորոնավիրուսի (COVID-19) վարակման կանխարգելման նպատակով **մեկուսացման մեջ գտնվող անձանց կեցության** ապահովումը»:

Հաշվեքննության արդյունքներ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ՝

1. «1224-11001» միջոցառման շրջանակներում ԷՆ-ի կողմից ֆինանսավորվել են ոչ միայն մեկուսացված անձանց կեցության ծախսերը, այլ նաև՝ բուժանձնակազմի և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված պացիենտների կեցության ծախսերը՝ հանգեցնելով 2,659,481.5 հազ. դրամի չափով ծախսերի նպատակային անարդյունավետության առաջացման:
2. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.06.20թ. թիվ 604-Լ և ՀՀ առողջապահության նախարարի 04.06.20թ. թիվ 1753-Լ համատեղ հրամանում, հղում կատարելով «11001 Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված *մեկուսացված* անձանց կեցության ապահովում» բյուջետային միջոցառմանը, այնուհետև ընդլայնվել է բյուջետային միջոցառման մեջ նախանշված շահառուների (այսինքն՝ միայն մեկուսացվածների) շրջանակը, մասնավորապես՝ սահմանելով COVID-19-ի հետևանքով առաջացած համավարակի ընթացքում ՀՀ տարածքում մեկուսացված անձանց **և բժիշկների կեցության ապահովման** աշխատանքների կազմակերպման ընթացակարգը, մեկուսացված անձանց, **բժիշկների և պացիենտների սննդի ապահովման** աշխատանքների կազմակերպման ընթացակարգը,
3. Մատակարարների հետ ԷՆ-ի կնքած պայմանագրերի 1.2-րդ կետում ևս ընդլայնվել է «1224-11001» միջոցառման շրջանակը՝ նշելով, որ կատարողը, արտակարգ իրավիճակներում կորոնավիրուսի վարակի տարածման կանխարգելման գործընթացի շրջանակներում, իրականացնում է **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող** և մեկուսացված անձանց և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված **պացիենտներին** հյուրանոցային տնտեսության օբյեկտներում և վերապրոֆիլավորված բժշկական կազմակերպություններում սննդի մատակարարման ծառայությունների մատուցում...

2020թ. ընթացքում «1224-11001» միջոցառման շրջանակներում բուժանձնակազմի կեցության ապահովման նպատակով հյուրանոցային ծառայությունների համար հատկացվել է 246,898.3 հազ. դրամ (Աղյուսակ 1), իսկ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող և կորոնավիրուսային հիվանդությամբ ախտորոշված պացիենտներին բժշկական

կազմակերպություններում սննդի մատակարարման ծառայությունների մատուցման համար հատկացվել է 2,412,583.2 հազ. դրամ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 1

N	Կազմակերպություն	Հյուրանոցային ծառայություն
1.	Թուֆենկյան հոսփիթալիթի ՍՊԸ /Երևան/	36,928,000
2.	Սոչի Պալաս ՍՊԸ	57,979,500
3.	Վալենտինա ՀՁ ՍՊԸ	49,294,000
4.	ՍՊ հոլդինգ ՍՊԸ	45,086,500
5.	Էլիզիում գելերի հոթել ՍՊԸ	37,239,250
6.	Գյումրու մարզամշակութային կենտրոն ՍՊԸ	10,976,080
7.	Գ.Մ. ԱՁ	9,395,000
Ընդամենը		246,898,330

Աղյուսակ 2

N	Կազմակերպություն	Սննդի ծառայություն
1	Գ.Լուսավորիչ ԲԿ	566,221,950
2	Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն	288,948,050
3	Սուրբ Աստվածամայր ԲԿ	247,247,190
4	Ոստիկանության բժշկական վարչության հոսպիտալ	227,865,200
5	Նորք ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ	174,532,550
6	Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ՓԲԸ	155,822,500
7	Մեղայն Կլինիկ ՍՊԸ	128,537,050
8	Արտաշատի ԲԿ	88,624,100
9	Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց ՓԲԸ	72,517,070
10	Սպիտակի ԲԿ	68,556,700
11	Էրեբունի ԲԿ	51,022,790
12	Արմենիա ԲԿ	44,569,550
13	Աստղիկ ԲԿ	42,842,300
14	Վեդու ԲԿ	41,589,100
15	Արաբկիր ԲԿ	28,762,450
16	Կապանի ԲԿ	24,503,200
17	Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց	22,918,650
18	Մարտունու ԲԿ	22,116,650
19	Ապարանի ԲԿ	16,827,650
20	Տավուշ ԲԿ	14,533,650
21	ՎԱՊՄԳՀ	13,284,200
22	Գյումրու բժշկական կենտրոն ՓԲԸ	13,135,200
23	Հրազդան ԲԿ	11,523,600
24	Դիլիջանի ԲԿ	9,656,650
25	Վանաձորի ԲԿ	8,753,000
26	Սևանի ԲԿ	7,702,300
27	Սիսիան ԲԿ	7,069,150
28	Մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ	5,636,650
29	Իջևանի ԲԿ	4,293,300
30	Սուրբ Աստվածածին ծննդատուն	2,970,800
Ընդամենը		2,412,583,200

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Մեկուսացված անձանցից բացի նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կեցության/սննդի ապահովման ծառայությունների տրամադրման անհրաժեշտության

վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ԷՆ-ն ստացել է ՀՀ ԱՆ-ից: Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ մատակարարների հետ կնքված պայմանագրերը թույլ են տալիս նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կեցության/սննդի ապահովման ծառայությունների տրամադրումը՝ ՀՀ ԷՆ-ն և ՀՀ ԷՆ ԶԿ-ն կատարել են պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Բյուջետային տվյալ միջոցառման միակ պատասխանատու և կատարող գերատեսչությունը հանդիսացել է ՀՀ ԷՆ-ն, որի կողմից չի պահպանվել իրեն վերապահված բյուջետային միջոցների ծախսման նպատակային արդյունավետությունը: Մեկուսացված անձանցից զատ այլ շահառուների ընդգրկումը պայմանագրերում իրականացվել է ԷՆ-ի կողմից մշակված պայմանագրերի տիպային ձևով և դրանց ստորագրմամբ, որի արդյունքում ԷՆ-ն հայեցողաբար ընդլայնել է ՀՀ կառավարության կողմից սահմանված բյուջետային միջոցառման շահառուների շրջանակը:

1.3.2. Ոչ ֆինանսական չափորոշիչների բացակայության վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշներ

Եթե իրականացվող որևէ գործառույթի մասով հավելյալ և հասցեական արդյունք սահմանված չէ, կամ ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, օգտավետությունը և տնտեսող լինելը երաշխավորված չեն, ապա նման գործառույթը (ծրագիրը) չպետք է իրականացվի, չպետք է նախաձեռնվի, պետք է դադարեցվի կամ կասեցվի՝ մինչև նշված պայմանների ապահովումը (*ՀՀ կառավարության 08.02.19թ. «ՀՀ կառավարության ծրագրի մասին» N65-Ա որոշման հավելվածի 3.2-րդ բաժին*):

Ծրագրային կառուցվածքով բյուջեն տեղեկացնում է նպատակների և արդյունքների մասին՝ հնարավորություն տալով այդ տեղեկատվությունն օգտագործել բյուջետային միջոցների օգտագործման համապատասխանությունը երաշխավորելու և այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, ինչպես նաև թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բարձրացնելու համար:

Ծրագրային բյուջետավորման ներդրումը որոշակի պահանջներ է առաջ բերում բյուջետային տեղեկատվության և հետևաբար նաև ընդհանուր բյուջետավորման գործընթացի նկատմամբ, այդ թվում՝ ակնկալվող արդյունքների և արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության ներառում բյուջետային փաստաթղթերում՝ բյուջետային որոշումների և հաշվետվողականության բարելավման նպատակով (*ՀՀ ֆինանսների նախարարի 23.06.17թ. «ՀՀ-ում ծրագրային բյուջեփորձման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության շրջանակներում մեթոդական ուղեցույցները հաստատելու մասին» թիվ 311-Ա հրամանի հավելված 1-ի 8-րդ և 11-րդ կետեր*):

Հաշվեքննության արդյունքներ

ՀՀ-ում գործում է ծրագրային բյուջետավորման համակարգը, որը ենթադրում է արդյունքին միտված բյուջետավորում: Մինչդեռ, ԷՆ-ի կողմից պատրաստված՝ ՀՀ կառավարության N388-Ն որոշման նախագծով «1224-11001» բյուջետային միջոցառման գծով արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչներ չեն սահմանվել, հետևաբար՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունն էլ արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի պարունակել: Արդյունքում, հնարավոր չի եղել ապահովել տվյալ բյուջետային միջոցառման գծով պետական միջոցների ծախսման հաշվետվողականության և նպատակային արդյունավետության նկատմամբ հսկողության բավարար մակարդակ:

Հաշվեքննության հարց – 2. Արդյո՞ք Էկոնոմիկայի նախարարության ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը եղել են արդյունավետ՝ երաշխավորելու համար բյուջետային ծրագրերի արդյունավետ իրականացում և արժանահավատ հաշվետվողականություն

Հաշվեքննության ենթահարց – 2.1. Արդյո՞ք ներդրված են եղել ֆինանսական կառավարման և հսկողության բավարար համակարգեր ու գործընթացներ

2.1.1. Մեկուսացված անձանց քանակի նկատմամբ հսկողության վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշներ

Հանրային հատվածի կազմակերպության ղեկավարը պատասխանատու է ՀՀ օրենսդրությանը համապատասխանող և արդյունավետ ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի առկայության ապահովման համար:

Ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերը հանրային հատվածի կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունն է, որով որջամիտ ձևով երաշխավորվում է հետևյալ պայմաններին համապատասխան կազմակերպության նպատակների իրականացումը՝

ա. ՀՀ օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին և այլնին) համապատասխանություն,

բ. տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,

գ. տեղեկությունների ամբողջականություն և վստահելիություն,

դ. կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն («Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մաս և 3-րդ հոդվածի 2-րդ մաս):

Գլխավոր ֆինանսիստն ապահովում է պետական մարմնի կողմից՝

ա) ֆինանսական կառավարման համակարգերի առկայությունը,

բ) գնումների մասին օրենսդրությանը համապատասխան՝ գնումների համակարգի առկայությունը:

Գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է պետական մարմնի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և դրա հրապարակայնության ապահովման համար և ձեռնարկում է օրենսդրությամբ սահմանված միջոցներ, այդ թվում՝ միջոցների վատնումը, չնախատեսված ծախսերի կատարումը կանխելու համար, պետական մարմնի ֆինանսական պարտավորությունների կառավարման համար:

Գլխավոր ֆինանսիստը պարտավոր է ապահովել՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով ֆինանսական հաշվետվությունների և այլ տեղեկատվության պատրաստումը և պետական մարմնի անունից ներկայացումը («Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված):

Հաշվեքննության արդյունքներ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ ԷՆ-ն, չնայած լինելով մեկուսացված անձանց կեցության ապահովման բյուջետային միջոցառման միակ պատասխանատու և կատարող գերատեսչությունը, չի ներդրել ֆինանսական կառավարման և հսկողության բավարար համակարգեր և ընթացակարգեր՝ երաշխավորելու համար բյուջետային միջոցների օգտագործման օրինականությունն ու արդյունավետությունը, որը ենթադրում է մեկուսացված անձանց քանակների հանդեպ հսկողության իրականացում: ԷՆ-ն բավարարվել է միայն ԱՆ պատասխանատուների կամ բժշկական կենտրոնների ներկայացրած տեղեկատվությամբ՝ չնայած ԱՆ-ն տվյալ բյուջետային միջոցառման շրջանակներում ծախսերի իրականացման գծով կատարող և պատասխանատու գերատեսչություն չի հանդիսացել:

Ներքին հսկողության ոչ բավարար արդյունավետ համակարգի արդյունքում, ԱՆ-ից ստացված մեկուսացվածների քանակի և ԷՆ-ի կողմից հարկային հաշիվներով վճարված սննդի և հյուրանոցային ծառայություններ ստացող անձանց քանակի միջև արձանագրվել են 187,934.3 հազ. դրամի չափով 10,225 հատ հյուրանոցային ծառայությունների և 23,385 հատ սննդի ծառայությունների շեղումներ (Հավելված 8): Այսինքն, ԷՆ-ն վճարել է ավելի շատ հյուրանոցային և սննդի ծառայությունների դիմաց, քան ԱՆ-ի տվյալների համաձայն, տվյալ մեկուսացման վայրում մեկուսացված անձինք են եղել:

Հարկ է նշել նաև, որ ԱՆ-ի ներկայացրած մեկուսացվածների վերաբերյալ տեղեկատվությունը պարունակել է մի շարք սահմանափակումներ և թերություններ: Մասնավորապես՝

- տեղեկատվությունը ներկայացվել է ծածկագրված, իսկ ծածկագրերի շրջանում առկա են եղել կրկնություններ,
- առկա են եղել բացակայող տվյալներ (օրինակ՝ մեկուսացման ավարտի ամսաթիվ, ժամ և այլն),
- առկա են եղել անճշտություններ (օրինակ՝ մեկուսացման ավարտի ամսաթիվը եղել է ավելի վաղ, քան մեկուսացման սկզբի ամսաթիվը),
- ԱՆ-ի կողմից վարվել է տվյալների երկու բազա՝ սկզբնական շրջանում excel ֆայլով, հետագայում՝ Արմմեդ բազայում, որոնք հետագայում միացվել են իրար:

Վերլուծական ընթացակարգերի կիրառությամբ, վերոնշյալ թերությունները հնարավորության սահմաններում ճշգրտվել են հաշվեքննողների կողմից:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Տվյալ հարցը ՀՀ ԷՆ և ՀՀ ԷՆ ԶԿ իրավասության շրջանակից դուրս է: Սննդի և հյուրանոցային ծառայություններից օգտված անձանց քանակը տեղում ճշտելու կամ գնահատելու ռեսուրսների բացակայության հիմքով Կոմիտեն դրական եզրակացություն տրամադրել է միմիայն ՀՀ ԱՆ պատասխանատուների կամ բժշկական կենտրոնների կողմից հաստատված հաշվետվությունների հիման վրա, ինչը նախատեսված է մատակարարների հետ կնքված պայմանագրերով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Տվյալ բյուջետային միջոցառման միակ պատասխանատու և կատարող գերատեսչությունը հանդիսացել է ԷՆ-ն և ոչ ԱՆ-ն: «Ծառայություններից օգտված անձանց քանակը տեղում ճշտելու կամ գնահատելու ռեսուրսների բացակայությունը» հանդիսացել է ներքին հսկողության համակարգի թերացում, հանգեցնելով բյուջետային միջոցների օգտագործման օրինականության և անարդյունավետության ռիսկերի առաջացման:

2.1.2. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի նկատմամբ հսկողության համակարգի վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշ

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակում տրամադրված օժանդակության գործիքի կիրառման մոնիթորինգն իրականացնում է ՀՀ ԷՆ-ն՝ եռամսյա կտրվածքով (ՀՀ կառավարության 31.03.20թ. N416-Լ որոշման հավելված 1-ով հաստատված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքի կիրառման կարգ»):

Հաշվեքննության արդյունք

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին ծրագրի նպատակն էր՝ օժանդակել առանձին տնտեսավարողներին՝ մեղմելու կորոնավիրուսի տարածման հետևանքով վերջիններիս մոտ կանխատեսվող ընթացիկ իրացվելիության հետ կապված ռիսկերը: Օժանդակությամբ նախատեսվում էր տնտեսավարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ՝ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված

տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:

Օժանդակության շահառու կարող էին հանդիսանալ տնտեսավարողները՝ Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացվող նպատակային վարկերի (սարքերի և սարքավորումների գնման դեպքում նաև լիզինգի) տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով:

2020 թվականին 17 ֆինանսական կազմակերպությունների միջոցով տրամադրվել է 2,318,075.4 հազ. դրամի օժանդակություն:

Մինչդեռ, հաշվեքննությամբ արձանագրվել է, որ ԷՆ-ի կողմից մոնիթորինգի գործառույթն ընդհանրապես չի իրականացվել:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին և 3-րդ ծրագրերի մոնիթորինգի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ կորոնավիրուսի տարածման խնդիրներով պայմանավորված՝ միջոցառումների մոնիթորինգ չի իրականացվել, քանի որ մոնիթորինգով նախատեսվում էր այցելել շահառուներին: Այդ պատճառով իրականացվել են աշխատանքներ հեռավար կարգով՝ ուսումնասիրելով բանկի կողմից ներկայացված տվյալները, այդ թվում՝ շահառուների, տոկոսների, վարկերի տրամադրման ժամկետների և այլ անհրաժեշտ պարամետրերի վերաբերյալ (արդյունքները կներկայացվեն 2022 թվականի առաջին եռամսյակում):

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի 6.1 կետի համաձայն, մոնիթորինգը կարող է իրականացվել ինչպես վարկառուի մոտ, այնպես էլ՝ հեռակա:

Հաշվեքննության ենթահարց – 2.2. Արդյո՞ք ներդրված ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը գործել են արդյունավետ

Ներդրված հսկողության գործընթացները ենթադրել են՝

ա. մատուցված մեկուսացման ծառայությունների վերաբերյալ ԷՆ ԶԿ-ի կողմից դրական եզրակացության տրամադրում,

բ. դրական եզրակացության հիման վրա՝ մատուցված ծառայությունների ընդունում ԷՆ-ի կողմից՝ հանձնման-ընդունման արձանագրությունների ստորագրմամբ,

գ. ընդունված ծառայությունների դիմաց վճարումների իրականացում ԷՆ-ի կողմից: Մինչդեռ, ստորև արձանագրված փաստերը վկայում են նշված հսկողության գործընթացների ոչ պատշաճ կիրառության մասին (*« Էկոնոմիկայի նախարարի*

03.06.20թ. թիվ 604-Լ և ՀՀ առողջապահության նախարարի 04.06.20թ. թիվ 1753-Լ համարյող հրաման, ԷՆ-ի և մատակարարների միջև կնքված պայմանագրեր):

2.2.1. Հանձնում-ընդունումից հետո տրամադրված դրական եզրակացություններ

Հաշվեքննության չափանիշ

ՀՀ ԷՆ-ն **ընդունել է** մատակարարների մատուցած **ծառայությունները՝ հիմք ընդունելով** ՀՀ ԷՆ ԶԿ-ի **դրական եզրակացությունը** (մատակարար կազմակերպությունների հետ ԷՆ-ի կնքած պայմանագրերի անբաժանելի մասը համարվող հանձնման-ընդունման արձանագրությունների դրույթ):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 1,245,690.4 հազ. դրամի չափով 140 գործարքների դեպքում (Հավելված 4) 30 մատակարար կազմակերպությունների հետ հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվել և նրանց մատուցած ծառայությունները ԷՆ-ի կողմից ընդունվել են **ավելի վաղ, քան ԷՆ ԶԿ-ի կողմից դրական եզրակացությունների տրամադրումը**: Այլ կերպ ասած, հանձնման-ընդունման արձանագրության կազմման պահին ԷՆ ԶԿ-ի ստորագրված դրական եզրակացությունը բացակայել է:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Հանձնում ընդունումները կատարվում են ծառայության մատուցման և/կամ հարկային հաշվի դուրս գրման ամսաթվով: Հարկային հաշիվները իրենց ուղեկցող բոլոր փաստաթղթերով ստորագրման են ներկայացվում միաժամանակ, և հանձնման-ընդունման ակտերը ստորագրվում են միայն դրական եզրակացության առկայության պարագայում:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները հերքվում են հավելված 5-ում բերված տեղեկատվությամբ, երբ տասնյակ դեպքերում հանձնում-ընդունումները կատարվել են ո՛չ ծառայության մատուցման, ո՛չ հարկային հաշվի դուրս գրման ամսաթվով:

2.2.2. Վճարումից հետո ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություններ

Հաշվեքննության չափանիշներ

Պատվիրատուն (ԷՆ-ն) պարտավոր է ծառայության արդյունքն **ընդունելու դեպքում** Կատարողին (մատակարար կազմակերպությանը) **վճարել** վերջինիս վճարման ենթակա գումարները: Ծառայության արդյունքը **համարվում է**

Պատվիրատուի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից **ընդունված, եթե** Կողմերի ստորագրությամբ **հաստատվում է** պայմանագրով նախատեսված **հանձնման-ընդունման արձանագրությունը** (ԷՆ-ի և Իմպերիալ Հոթել ՍՊԸ-ի միջև 24.10.20թ. կնքված թիվ 327-20, ԷՆ-ի և ՎՖՋ ՍՊԸ-ի միջև 30.07.20թ. կնքված թիվ 230-20, ԷՆ-ի և Հ.Ս. ԱՁ-ի միջև 07.08.20թ. կնքված թիվ 255-20, ԷՆ-ի և Սոչի Պալաս ՍՊԸ-ի միջև 17.07.20թ. կնքված թիվ 208-20 պայմանագրերի 2.1.5-րդ կետ, ԷՆ-ի և Էմ Բի Ջի Գրուպ ՍՊԸ-ի միջև 09.07.20թ. կնքված թիվ 184-20 պայմանագրի 2.1.6-րդ կետ):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 46,724.9 հազ. դրամի չափով 7 գործարքների դեպքում հանձնման-ընդունման արձանագրությունները կազմվել են հանձնվող/ընդունվող ծառայությունների դիմաց ԷՆ-ի կողմից արդեն իսկ վճարումը կատարած լինելուց հետո:

Աղյուսակ 3

N	Կազմակերպություն	Հարկային հաշվի սերիա - համար	Վճարման ամսաթիվ	Հանձնման-ընդունման ա/թ	Ուշացում (օր)	Վճարված գումար
1	ԻՄՊԵՐԻԱԼ ՀՈՒԹԵԼ ՍՊԸ	Ա9528658428	5/6/2020	11/25/2020	203	19,635,000
2	ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ ՍՊԸ	Բ6218317509	6/30/2020	11/20/2020	143	480,000
3	ՎՖՋ ՍՊԸ	Բ6145842538	5/22/2020	9/30/2020	131	7,031,400
4	ԷՄ ԲԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ4811565552	6/10/2020	9/9/2020	91	12,936,000
5	Հ.Ս. ԱՁ	Բ0510606152	7/9/2020	8/6/2020	28	380,850
6	Հ.Ս. ԱՁ	Բ3368129014	7/10/2020	8/6/2020	27	1,950,600
7	ՍՈՉԻ ՊԱԼԱՍ ՍՊԸ	Բ9064044965	6/24/2020	7/1/2020	7	4,311,000
Ընդամենը						46,724,850

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Համավարակի սկզբում նշված գործընթացները կանոնակարգված չէին, և նախնական փուլում միակ իրավական հիմքը ՀՀ կառավարության 12.03.2020թ. №296-Ա որոշումն էր (այսուհետ՝ 296-Ա որոշում), որի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վճարման իրականացման համար հիմք են հանդիսանում դուրս գրված հաշիվ ապրանքագրերը: Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.03.2020թ. №298-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի մարտի 16-ից ՀՀ ամբողջ տարածքում հայտարարված էր արտակարգ դրություն՝ խստորեն սահմանափակելով քաղաքացիների տեղաշարժը, ինչի արդյունքում բարդություններ էին առաջանում աշխատանքների կազմակերպման և ժամանակին իրականացման մասով, այդ թվում՝ անհնար էր նաև վճարման համար լրացուցիչ հիմք հանդիսացող փաստաթղթերի տրամադրումը: Բարդությունները կապված էին նաև հրատապ որոշումների կայացմամբ, անձանց կեցության ու կացության ապահովման հրատապությամբ, աշխատանքների կազմակերպման ապահովման մասով անբավարար ռեսուրսներով, հեռավար աշխատանքներով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Պարզաբանումը չի ընդունվել, քանի որ նշված դեպքերում հաշիվ-ապրանքագրերից զատ ԷՆ-ն ինքն է ստորագրել հանձնման-ընդունման արձանագրություններ, սակայն այն ժամանակ, երբ վճարումն արդեն իրականացված էր: Այսինքն, ներդրված հսկողության գործընթացը չի գործել, իսկ թե ինչ նպատակ է ունեցել հետին թվով՝ վճարումից հետո հանձնման-ընդունման արձանագրություն ստորագրելը, Հաշվեքննիչ պալատը չի կարող հայտնել, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հաշվեքննիչ պալատն իր կողմից բացահայտված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ որակում չի տալիս և դրանց հետևանքների վերաբերյալ կանխատեսումներ չի անում:

2.2.3. Վճարումից հետո տրամադրված դրական եզրակացություններ

Հաշվեքննության չափանիշ

Պայմանագրի գումարը պատվիրատուն Կատարողին է վճարում ՀՀ ԷՆ ԶԿ-ի դրական եզրակացությունը ստանալուց հետո (ԷՆ-ի և Իմպերիալ Հոթել ՍՊԸ-ի միջև 24.10.20թ. կնքված թիվ 327-20, ԷՆ-ի և ՎՖՋ ՍՊԸ-ի միջև 30.07.20թ. կնքված թիվ 230-20, ԷՆ-ի և Հ.Ս. ԱՁ-ի միջև 07.08.20թ. կնքված թիվ 255-20, ԷՆ-ի և Սոչի Պալաս ՍՊԸ-ի միջև 17.07.20թ. կնքված թիվ 208-20 պայմանագրերի 4.3-րդ կետ, ԷՆ-ի և Էմ Բի Զի Գրուպ ՍՊԸ-ի միջև 09.07.20թ. կնքված թիվ 184-20 պայմանագրի 4.2-րդ կետ):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 46,344.0 հազ. դրամի չափով 6 գործարքների դեպքում ԷՆ-ն մատակարար կազմակերպություններին վճարումը կատարել է վճարումը կատարելու պահին ԷՆ ԶԿ-ի դրական եզրակացությունը ստացած չլինելու պայմաններում:

Աղյուսակ 4

N	Կազմակերպություն	Հ/Հ սերիա - համար	Մատակարարման ամսաթիվ	Վճարման ամսաթիվ	Դրական եզրակացության ամսաթիվ	Վճարումից անցած օրեր	Վճարված գումար
1	ԻՄՊԵՐԻԱԼ ՀՈԹԵԼ ՍՊԸ	Ա9528658428	4/30/2020	5/6/2020	12/3/2020	211	19,635,000
2	ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ԵՐԵՄՅԱՆՆԵՐ ՍՊԸ	Բ6218317509	4/30/2020	6/30/2020	11/20/2020	143	480,000
3	ՎՖՋ ՍՊԸ	Բ6145842538	5/20/2020	5/22/2020	10/1/2020	132	7,031,400
4	ԷՄ ԲԻ ԶԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ4811565552	5/20/2020	6/10/2020	9/28/2020	110	12,936,000
5	Հ.Ս. ԱՁ	Բ3368129014	6/30/2020	7/10/2020	8/7/2020	28	1,950,600
6	ՍՈՉԻ ՊԱԼԱՍ ՍՊԸ	Բ9064044965	6/15/2020	6/24/2020	7/1/2020	7	4,311,000
Ընդամենը							46,344,000

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Հաշվի առնելով, որ ԷՆ-ի և Իմպերիալ Հոթել ՍՊԸ-ի միջև կնքված 327-20 պայմանագիրը տարածվում է հոկտեմբերի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ ՎՖՋ ՍՊԸ-ի հետ կնքված 230-20 պայմանագիրը՝ հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, Իմպերիալ Հոթել ՍՊԸ-ի Ա9528658428 (16.04-30.04 ծառ. մատուցման ժամանակահատված) և ՎՖՋ ՍՊԸ-ի Բ6145842538 (01.05-15.05 ծառ. մատուցման ժամանակահատված) հաշիվների համար ընդունման հանձնման ակտեր և դրական եզրակացություններ չեն եղել:

Հայր և Որդի Երեմյաններ ՍՊԸ-ի Բ6218317509 (06.04-30.04 մատուցման ժամանակահատված) և Էմ Բի Ջի Գրուպ ՍՊԸ-ի Բ4811565552 հաշվարկային հաշիվները վճարվել են առանց հանձնման-ընդունման ակտի և դրական եզրակացության՝ 296-Ա որոշման համաձայն, իսկ դրական եզրակացություն է համարվել հաշիվ ապրանքագրերի վրա ՀՀ ԷՆ ԶԿ-ի պատասխանատու անձի ստորագրությունը:

Հ.Ս. ԱԶ-ի Բ0510606152 (11.06-15.06 մատուցման ժամանակահատված) և Բ3368129014 (16.06-30.06 մատուցման ժամանակահատված) հաշվարկային փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտը եղել է ամփոփ և ներառել է մինչև 2020թ. հուլիսի 31-ը մատուցած ծառայությունները, ինչով պայմանավորված՝ արձանագրությունները եղել են օգոստոսի 7-ի դրությամբ: Ինչպես նաև ԱԶ-ի հետ 255-20 պայմանագիրը կնքվել է 2020թ. օգոստոսի 7-ին և տարածվել է հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Սոչի Պալաս ՍՊԸ-ի Բ9064044965 (03.06-15.06 ծառ. մատուցման ժամանակահատված) հաշիվ վավերագրի հանձնման-ընդունման ակտը եղել է ամփոփ և իր մեջ ներառել է մինչև 2020թ. հունիսի 30-ը մատուցած ծառայությունները, ինչով պայմանավորված՝ արձանագրությունները ստորագրվել են հուլիսի 1-ի դրությամբ:

Հաշվի առնելով համավարակի արդյունքում մատակարարների ծանր ֆինանսական վիճակը՝ վճարումները կատարվել են 296-Ա որոշման, ինչպես նաև հաշիվ ապրանքագրերի վրա ՀՀ ԷՆ ԶԿ-ի պատասխանատու անձի ստորագրության հիման վրա, իսկ հետագայում՝ պայմանագրերը կնքելուց հետո միայն պահանջվել են համապատասխան այլ փաստաթղթեր:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Դրական եզրակացությունները վճարումից հետո տրամադրելը հանդիսացել է ներքին հսկողության համակարգի թերացում:

2.2.4. Առանց դրական եզրակացության վճարումներ

Հաշվեքննության չափանիշներ

ԷՆ-ն ստանալով **հանձնման-ընդունման ակտերը** և դրանց հիման վրա ծառայության կատարման արդյունքների վերաբերյալ ԶԿ-ի **դրական եզրակացությունը**, վճարում է մատուցված ծառայության դիմաց ծառայության մատուցման պայմանագրով սահմանված կարգով (ՀՀ առողջապահության նախարարի համալրող հրամանով հաստատված (ուժի մեջ մտած համապատասխանաբար 03.06.2020թ. թիվ 604-Լ և 04.06.2020թ. թիվ 1753-Լ) «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի ընթացքում ՀՀ

տարածքում մեկուսացված անձանց և բժիշկների կացության ապահովման աշխատանքների կազմակերպման ընթացակարգ»-ի, ինչպես նաև «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի ընթացքում ՀՀ տարածքում մեկուսացված անձանց և բժիշկներին և պացիենտներին սննդի ապահովման աշխատանքների կազմակերպման ընթացակարգ»-ի 5-րդ մաս):

Պայմանագրի գումարը պատվիրատուն Կատարողին է վճարում ՀՀ ԷՆ ԶԿ-ի **դրական եզրակացությունը** ստանալուց հետո 7 օրվա ընթացքում (ՀՀ ԷՆ-ի և մատակարարների միջև կնքված թիվ 140-20/1 պայմանագրի 4.3-րդ կետ և 265-20, 180-20, 181-20, 182-20, 184-20 պայմանագրերի 4.2-րդ կետ):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 2020 թվականի հունիսի 4-ից հետո, **82,003.6 հազ. դրամի չափով 7 գործարքների դեպքում վճարումները կատարվել են առանց պայմանագրեր կնքելու, առանց հանձնման-ընդունման արձանագրության և դրական եզրակացության կազմման:** Միջդեռ, Էկոնոմիկայի և Առողջապահության նախարարների համատեղ հրամանն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունիսի 4-ից, իսկ ստորև ներկայացված մատակարարների հետ կնքված պայմանագրերով սահմանված պայմանները, համաձայն պայմանագրերի, տարածվում են գործարքներից ավելի վաղ ընկած ամսաթվերից ծագած հարաբերությունների վրա:

Աղյուսակ 5

N	Հարկային հաշիվ	Ստացող	Հարկային հաշվի գումար	Վճարման ա/թ	Ծառ. Մատուցման ա/թ	Պայմ. ժամկետը	Պայմ. համար	Պայմ. ա/թ	Պայմ. սկիզբ
1	6108015997	ՌԷԺԻՆԷ ՍՊԸ	24,720,000.0	11-06-20	01-06-20	01-06-20	140-20/1	01-06-20	01-06-20
2	6593557169	ՌԷԺԻՆԷ ՍՊԸ	23,175,000.0	25-06-20	22-06-20	22-06-20	140-20/1	01-06-20	01-06-20
3	7445176964	ՌԵԴԻ-ՍԹԵԴԻ ՍՊԸ	1,851,550.0	16-10-20	30-06-20	30-12-20	265-20	14-08-20	01-04-20
4	2371888946	ԵՆՅԱՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ	11,180,750.0	16-07-20	06-07-20	06-07-20	180-20	09-07-20	23-04-20
5	8383557373	Ռ.Գ. ԱԶ	6,805,000.0	20-07-20	10-07-20	10-07-20	182-20	09-07-20	22-06-20
6	56288421	ԴՂՅԱԿ ՍՊԸ	2,301,280.0	22-07-20	11-07-20	11-07-20	181-20	09-07-20	11-06-20
7	5451604008	ԷՄ ԲԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	11,970,000.0	22-07-20	16-07-20	16-07-20	184-20	09-07-20	08-05-20
Ընդամենը			82,003,580.0						

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

1. Ռեդի Սթեդի ՍՊԸ-ի Բ7445176964 հաշիվը դուրս է գրվել 16.07.21թ.-ին հունիսին մատուցած ծառայությունների համար (այս ժամանակաշրջանում մատակարարի կողմից ներկայացված փաստաթղթերը ուղեկցվել են առանց հանձնման-ընդունման ակտերի և դրական եզրակացությունների: Որպես դրական եզրակացություն հիմք էր ընդունվում մասնագիտական

ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը): Ընկերության հետ 265-20 պայմանագիրը կնքվել է 2020թ. օգոստոսի 14-ին, իսկ մինչ այդ մատակարարի կողմից ծառայությունն արդեն մատուցվել էր: Տեխնիկական խնդիրներով պայմանավորված՝ վճարման փաստաթուղթը ստորագրման է ներկայացվել ուշ, և վճարումն իրականացվել է հոկտեմբերին:

2. Ենյան Գրուպ ՍՊԸ-ի Բ2371888946 հաշիվը դուրս է գրվել 06.07.2020թ.-ին 2020թ. հունիսի 16-30-ը մատուցած ծառայությունների համար (այս ժամանակաշրջանում մատակարարի կողմից ներկայացված փաստաթղթերը ուղեկցվել են առանց հանձնման ակտերի և դրական եզրակացությունների: Որպես դրական եզրակացություն հիմք էր ընդունվում մասնագիտական ստորաբաժանման ղեկավարի ստորագրությունը): Ընկերության հետ 180-20 պայմանագիրը կնքվել է 2020թ. հուլիսի 9-ին :

3. Ռ.Գ. ԱԶ-ի դեպքում հարկային փաստաթուղթը դուրս է գրվել ավելի վաղ մատուցած ժամանակաշրջանի համար (22.06-06.07.2020թ.)՝ նախքան ԱԶ-ի հետ 182-20 պայմանագրի կնքումը:

4. Դոյակ ՍՊԸ-ի Բ 0056288421 հարկային փաստաթուղթը դուրս է գրվել ավելի վաղ մատուցած ժամանակաշրջանի համար (26.06-10.07), նախքան Ընկերության հետ 181-20 պայմանագրի կնքումը:

5. Ռէժինե ՍՊԸ-ի Ա6108015997 հարկային փաստաթուղթը դուրս է գրվել ավելի վաղ մատուցած ժամանակաշրջանի համար (15.05-31.05), նախքան Ընկերության հետ 140-20 պայմանագրի կնքումը:

6. Ռէժինե ՍՊԸ-ի Ա6593557169 հարկային փաստաթուղթը (01.06-15.06 ծառ. մատուցման ժամանակահատված) հիմքերը բացակայում են՝ պայմանավորված հեռավար ռեժիմով աշխատելու հանգամանքով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը չի ընդունվել, քանի որ հունիս ամսին մատակարարի կողմից ներկայացված փաստաթղթերը չպետք է ուղեկցվեին առանց հանձնման-ընդունման ակտերի և դրական եզրակացությունների, որովհետև հունիսի 4-ից ուժի մեջ է մտել ՀՀ էկոնոմիկայի նախարարի և ՀՀ առողջապահության նախարարի համատեղ հրամանը, որով սահմանվել է պահանջ՝ վճարում իրականացնել հանձնման-ընդունման արձանագրության և դրական եզրակացության առկայությամբ: Այսինքն, հունիսի 4-ից սկսած, ցանկացած մատուցված ծառայությունների համար պետք է կնքվեին պայմանագրեր և կատարվեին վճարումներ դրական եզրակացության հիման վրա:

2.2.5. Ուշացումով վճարումներ

Հաշվեքննության չափանիշներ

Պայմանագրի գումարը պատվիրատուն (ԷՆ-ն) Կատարողին է վճարում ՀՀ ԷՆ ԶԿ-ի դրական եզրակացությունը ստանալուց հետո **7 աշխատանքային օրվա ընթացքում** (մատակարար կազմակերպությունների հետ ԷՆ-ի կնքած պայմանագրերի 4.2-րդ կամ 4.3-րդ կետ):

Պատվիրատուի կողմից վերոնշյալ ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար

հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով (մատակարար կազմակերպությունների հետ էՆ-ի կնքած պայմանագրերի 5.5-րդ կետ):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 492,954.7 հազ. դրամի չափով 58 գործարքների դեպքում էՆ-ն մատակարար կազմակերպություններին վճարումները կատարել է էՆ ԶԿ-ի կողմից դրական եզրակացության տրամադրումից 8 և ավելի (ընդհուպ մինչև՝ 37) աշխատանքային օր անց:

Աղյուսակ 6

N	Կազմակերպություն	Հ/Հ սերիա - համար	Մատակարարման ամսաթիվ	Դրական եզրակացության ամսաթիվ	Վճարման ամսաթիվ	Վճարման ուշացում /աշխ. օր/	Վճարված գումար
1	Հ.Ա. ԱՁ	Բ6845112968	7/15/2020	8/7/2020	9/30/2020	37	2,787,750
2	ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ ՍՊԸ	Ա9286456304	8/7/2020	8/25/2020	10/1/2020	26	7,077,500
3	ԷՄ ԲԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ4327992022	8/12/2020	8/21/2020	9/29/2020	26	10,555,000
4	Ա.Ա. ԱՁ	Բ3458080422	7/23/2020	8/25/2020	9/30/2020	25	1,416,000
5	ՍՊ ՀՈՒԴԻՆԳ ՍՊԸ	Բ7948722174	8/15/2020	8/26/2020	10/1/2020	25	666,500
6	ՖԵՐԱԿՕ ՍՊԸ	Բ5291866709	8/20/2020	8/25/2020	9/30/2020	25	5,161,000
7	ՖԵՐԱԿՕ ՍՊԸ	Բ7513039908	8/20/2020	8/25/2020	9/30/2020	25	4,518,500
8	Ա.Ա. ԱՁ	Բ9866241708	7/16/2020	8/25/2020	9/29/2020	24	1,470,000
9	ԵՆՅԱՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ3117708402	8/15/2020	8/25/2020	9/29/2020	24	13,252,400
10	Ռ.Գ. ԱՁ	Բ6987251734	8/21/2020	8/27/2020	9/30/2020	23	2,860,000
11	ԷՄ ԲԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ9708560178	8/23/2020	8/27/2020	9/29/2020	22	10,696,000
12	Յ.Ս. ԱՁ	Բ6138425816	8/12/2020	8/28/2020	9/30/2020	22	4,175,400
13	ԱՐԻԵՍ ԼԱՆՁ ՍՊԸ	Բ9649129265	8/17/2020	8/31/2020	9/30/2020	21	8,290,800
14	ՌԵԺԻՆԷ ՍՊԸ	Ա8488909374	10/31/2020	11/2/2020	12/2/2020	22	25,772,700
15	Հ.Ա. ԱՁ	Բ7917779754	7/31/2020	8/7/2020	9/8/2020	22	2,419,350
16	ԱՐԻԵՍ ԼԱՆՁ ՍՊԸ	Բ6902082337	8/24/2020	9/1/2020	9/30/2020	20	1,673,100
17	ԴՂՅԱԿ ՍՊԸ	Բ9213782948	8/25/2020	9/1/2020	9/30/2020	20	929,120
18	ԷՄ ԲԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ9345934165	10/28/2020	11/4/2020	12/3/2020	21	11,600,000
19	ԼԱՐԿՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ա6750419149	8/31/2020	9/1/2020	9/30/2020	20	1,340,000
20	ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ8812661521	7/31/2020	9/1/2020	9/30/2020	20	2,701,000
21	Հ.Ա. ԱՁ	Բ7625563142	10/31/2020	11/4/2020	12/3/2020	21	6,580,500
22	ՖԼԵՔՍ 20 ՍՊԸ	Բ1019126520	8/31/2020	9/1/2020	9/30/2020	20	3,441,048
23	ՖԼԵՔՍ 20 ՍՊԸ	Բ3160371563	10/27/2020	11/4/2020	12/3/2020	21	11,114,850
24	ԵՆՅԱՆ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ9325774772	10/31/2020	11/6/2020	12/3/2020	19	25,586,600
25	ԹԵՍԹԻ ՖՈՒԴ ՍՊԸ	Բ1896657269	10/31/2020	11/6/2020	12/3/2020	19	1,858,300
26	ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ7658064179	6/30/2020	9/3/2020	9/30/2020	18	2,794,200
27	ՖԵՐԱԿՕ ՍՊԸ	Բ3625349094	10/31/2020	11/6/2020	12/3/2020	19	13,827,650
28	ՖԵՐԱԿՕ ՍՊԸ	Բ7050500835	10/31/2020	11/6/2020	12/3/2020	19	11,146,250
29	ՍՈՉԻ ՊԱԼԱՍ ՍՊԸ	Բ1514019936	6/30/2020	7/1/2020	7/27/2020	18	6,084,000
30	Սպիտակի երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցացիա ՀԿ	Բ8597014291	10/31/2020	11/6/2020	12/2/2020	18	9,089,100
31	ԱՐԻԵՍ ԼԱՆՁ ՍՊԸ	Բ4357058578	7/26/2020	7/30/2020	8/24/2020	17	2,856,000
32	ԼԱՐԿՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ա2746986833	6/30/2020	7/2/2020	7/24/2020	16	3,900,000
33	ԱՐԻԵՍ ԼԱՆՁ ՍՊԸ	Բ1028514187	7/31/2020	8/3/2020	8/24/2020	15	10,170,870
34	ՍՈՉԻ ՊԱԼԱՍ ՍՊԸ	Բ4322704741	6/30/2020	7/1/2020	7/22/2020	15	2,360,000
35	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ2989183211	9/30/2020	12/7/2020	12/23/2020	12	1,843,250
36	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ7499705080	10/31/2020	12/7/2020	12/23/2020	12	2,403,700

37	ԴՂՅԱԿ ՍՊԸ	Բ9717768653	12/4/2020	12/5/2020	12/23/2020	12	4,124,160
38	ՌԷԺԻՆԷ ՍՊԸ	Ա8443466404	10/19/2020	10/28/2020	11/12/2020	11	13,440,000
39	ՌԷԺԻՆԷ ՍՊԸ	Ա1124982547	9/30/2020	10/28/2020	11/12/2020	11	240,000
40	ՖԵՐԱԿՕ ՍՊԸ	Բ2144973655	12/6/2020	12/8/2020	12/23/2020	11	7,609,500
41	ԼԱՐԿՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Ա6426561501	8/15/2020	8/21/2020	9/4/2020	10	1,375,000
42	ՌԷԺԻՆԷ ՍՊԸ	Ա1545793838	6/30/2020	7/13/2020	7/27/2020	10	31,967,600
43	ՖԼԵՔՍ 20 ՍՊԸ	Բ3517672121	11/11/2020	11/20/2020	12/4/2020	10	11,202,090
44	ԷՄ ԲԻ ՋԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ3534092469	11/8/2020	11/20/2020	12/3/2020	9	12,788,000
45	ԹԵՍԹԻ ՖՈՒԴ ՍՊԸ	Բ6217435138	11/15/2020	11/20/2020	12/3/2020	9	2,325,600
46	ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ0048102382	10/19/2020	11/20/2020	12/3/2020	9	4,033,850
47	ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ0384612000	10/31/2020	11/20/2020	12/3/2020	9	1,703,600
48	Ռ.Գ. ԱՁ	Բ6854944235	11/18/2020	11/20/2020	12/3/2020	9	5,562,500
49	Ռ.Գ. ԱՁ	Բ4163510378	11/12/2020	11/20/2020	12/3/2020	9	1,465,500
50	Ռ.Գ. ԱՁ	Բ8573339635	11/9/2020	11/20/2020	12/3/2020	9	3,630,500
51	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ7586334197	11/30/2020	12/11/2020	12/24/2020	9	6,121,200
52	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ8671679709	11/30/2020	12/11/2020	12/24/2020	9	7,164,550
53	ՖԵՐԱԿՕ ՍՊԸ	Բ7307277877	11/10/2020	11/20/2020	12/3/2020	9	10,467,500
54	ԱՐԻԵՍ ԼԱՆՁ ՍՊԸ	Բ9066983640	7/15/2020	8/17/2020	8/27/2020	8	10,563,120
55	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ2250062742	11/30/2020	12/15/2020	12/25/2020	8	72,805,250
56	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ1561296670	10/31/2020	11/20/2020	12/2/2020	8	41,012,250
57	ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ5272582826	10/31/2020	11/20/2020	12/2/2020	8	164,150
58	Սպիտակի երիտասարդ մարդկանց քրիստոնեական ասոցացիա ՀԿ	Բ8565030977	11/15/2020	11/20/2020	12/2/2020	8	8,770,300
Ընդամենը							492,954,658

Դուրս գրված հարկային հաշիվների դիմաց վճարումների կատարումը ձգձգվել է՝ ընդհուպ 2-3 ամսով (միջինում վճարումները կատարվել են 14 օրում) (Աղյուսակ 7) և դա այն պայմաններում, երբ 140,644.3 հազ. դրամի չափով 11 գործարքների դեպքում մատակարարներին ԷՆ-ն վճարումները կատարել է կանխավճարով, այսինքն՝ մատակարարների կողմից դեռևս ծառայություններ մատուցած չլինելու պայմաններում (Աղյուսակ 8): Ընդ որում, «1224-11001 Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում» միջոցառման շրջանակներում ձեռք բերվող ծառայությունների առնչությամբ նախատեսված չի եղել կանխավճարի տրամադրման հնարավորություն:

Աղյուսակ 7

Կազմակերպություն	Հ/Հ սերիա - համար	Մատակարարման ամսաթիվ	Դուրս գրման ամսաթիվ	Վճարման ամսաթիվ	Բյուջեից վճարված	Վճարում- դուրս գրում
ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ7445176964	6/30/2020	7/16/2020	10/16/2020	1,851,550	92
Լ.Ս. ԱՁ	Բ4145565356	5/18/2020	5/25/2020	8/13/2020	512,200	80
Հ.Ս. ԱՁ	Բ6845112968	7/15/2020	7/16/2020	9/30/2020	2,787,750	76
Ա.Ա. ԱՁ	Բ9866241708	7/16/2020	7/16/2020	9/29/2020	1,470,000	75
ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ ՍՊԸ	Ա1026785646	5/15/2020	5/18/2020	7/28/2020	3618700	71
ՍՊ ՀՈՒՂԻՆԳ ՍՊԸ	Բ2101126793	4/30/2020	4/30/2020	7/9/2020	1,760,000	70
ՍՊ ՀՈՒՂԻՆԳ ՍՊԸ	Բ4068096863	4/30/2020	4/30/2020	7/9/2020	5,568,000	70
Ա.Ա. ԱՁ	Բ3458080422	7/23/2020	7/23/2020	9/30/2020	1,416,000	69
ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ ՍՊԸ	Ա9572071138	4/30/2020	5/18/2020	7/24/2020	1802600	67
ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ5319863723	5/31/2020	6/5/2020	8/10/2020	4,748,500	66
ԿԱՐԱՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	Բ7371906600	5/31/2020	6/23/2020	8/26/2020	1,108,550	64
ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ5531438387	5/31/2020	6/5/2020	8/7/2020	4,871,450	63

ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ9268521587	5/31/2020	6/5/2020	8/7/2020	5550050	63
Հ.Ս. ԱԶ	Բ4881302808	8/7/2020	8/14/2020	10/6/2020	682,850	53
ՌԵԴԻ ՍԹԵԴԻ ՍՊԸ	Բ4009775864	5/31/2020	6/18/2020	8/7/2020	8,736,450	50

Աղյուսակ 8

N	Կազմակերպություն	Հ/Հ սերիա - համար	Մատակարարման ամսաթիվ	Դուրս գրման ամսաթիվ	Վճարման ամսաթիվ	Վճարված գումար	Դուրս գրում-մատակարարում ժամանակային շեղում
1	ՌՌԻՄԻ ՍՊԸ	Բ7562000595	4/30/2020	4/1/2020	4/6/2020	36,465,000	-29
2	ՆՈՐՔ ՌԵԶԻԴԵՆՍ ՓԲԸ	Բ5247449413	4/30/2020	4/1/2020	4/6/2020	10,499,760	-29
3	ԳԱՐՈՒՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ ՍՊԸ	Ա3719648674	4/15/2020	4/2/2020	4/6/2020	10,500,000	-13
4	ՌԻԶՄԱՅՆԴ ՍՊԸ	Ա4878936991	4/15/2020	4/2/2020	4/6/2020	15,906,000	-13
5	ԻՆՏԵՌՄԱՐՄ ՍՊԸ	Ա3964318511	4/26/2020	4/17/2020	4/22/2020	26,194,500	-9
6	ՍՈԶԻ ՊԱԼԱՍ ՍՊԸ	Բ8035278188	4/15/2020	4/6/2020	4/8/2020	6,669,000	-9
7	ՎՖՋ ՍՊԸ	Բ8802548700	4/15/2020	4/6/2020	4/8/2020	3,780,000	-9
8	Լ.Գ. ԱԶ	Բ9114525295	4/15/2020	4/6/2020	4/8/2020	15,900,000	-9
9	ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՊԸ	Ա9375157408	4/15/2020	4/7/2020	4/9/2020	13,830,003	-8
10	ՍՊ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ	Բ0172775386	4/15/2020	4/7/2020	4/9/2020	90,000	-8
11	ՍՊ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ	Բ0581085014	4/15/2020	4/9/2020	4/13/2020	810,000	-6
Ընդամենը						140,644,263	

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Հաշվի առնելով, որ ֆինանսավորումները իրականացվում են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով նախատեսված միջոցների հաշվին, և տվյալ միջոցների սպառման դեպքում հաջորդ ֆինանսավորումը իրականացվում է նոր ընդունված կառավարության որոշումների շրջանակներում՝ արդյունքում առաջացել են դուրս գրված հաշիվների վճարման ժամկետների շեղումները: Միաժամանակ, որոշ դեպքերում, հարկային հաշիվների վճարումները կախված են դրանց վերջնական, ամփոփ ստորագրված տարբերակով տրամադրման հանգամանքից:

Վճարումների ուշացումը պայմանավորված է կամ վրիպակների պատճառով մատակարարների կողմից հիմնավոր փաստաթղթերի ուշ ներկայացմամբ, կամ ֆինանսական միջոցների բացակայությամբ:

Նախնական շրջանում հյուրանոցները չեն ունեցել համապատասխան ֆինանսական միջոցներ կոմունալ վճարումների իրականացման, մեկուսացված անձանց կեցության խնդիրների լուծման համար: Ստեղծված իրավիճակում ապրիլ ամսին հարկային հաշիվները դուրս են գրվել ամբողջ ամսվա նախատեսված ծախսերի կատարման համար:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Պարզաբանումն ընդունելի չէ, քանի որ ԷՆ-ն պայմանագրերի ստորագրմամբ ստանձնել է դրական եզրակացության տրամադրումից հետո 7-օրյա ժամկետում վճարումներն իրականացնելու պարտավորություն: Եթե առաջացել է միջոցների անբավարարություն, ապա դա հետևանք է միջոցների թերի պլանավորման:

2.2.6. Ծառայության կատարման արդյունքների մասին հաշվետվությունների և դրանցում առկա վավերապայմանների բացակայության վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշներ

Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են **սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի** (այսուհետ՝ սկզբնական հաշվառման փաստաթղթեր) հիման վրա, որոնք արձանագրում են գործառնությունների կատարումը, այլ դեպքերի և իրադարձությունների տեղի ունենալը («Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մաս):

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները (ռեկվիզիտները)՝

- 1) փաստաթղթի անվանումը,
- 2) **հերթական համարը,**
- 3) **կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը,**
- 4) գործառնության մասնակիցների (մասնակցի) անվանումը (անունը, ազգանունը),
- 5) գործառնության (այլ դեպքի կամ իրադարձության) բովանդակությունը,
- 6) գործառնության (այլ դեպքի կամ իրադարձության) չափման միավորները՝ դրամական և (կամ) բնաիրային արտահայտությամբ,
- 7) պատասխանատու անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը («Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 132 հարկային հաշիվների մասով (Հավելված 9) առկա չեն եղել հյուրանոցային ծառայությունների արդյունքների կատարման հաշվետվությունները, իսկ սննդի մատուցմանը և հյուրանոցային ծառայությունների վերաբերող արդյունքների կատարման բոլոր հաշվետվությունները չեն ներառել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հերթական համարի և փաստաթղթի կազմելու տարվա, ամսվա և ամսաթվի վերաբերյալ վավերապայմանները:

Ընդ որում, Ռիչմայնդ ՍՊԸ-ի ներկայացված հաշվետվությունները պարունակում են ընդհանրական ցուցանիշներ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Սկզբնական շրջանում վճարումներն իրականացվել են 296-Ա որոշման համաձայն, իսկ հաշվետվությունների ձևն ու կարգը մշակվել են հետագայում՝ ամենօրյա ներքին քննարկումների հիման վրա՝ հաշվի առնելով նաև ստեղծված իրավիճակում ընթացքում առաջացող խնդիրներն ու դրանց լուծման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ներկայացված հաշվետվությունների արժանահավատությանը, ապա հիմք են ընդունվել ՀՀ ԱՆ կողմից հյուրանոցներում նշանակված պատասխանատու անձանց և հյուրանոցային ծառայություններ մատուցող անձանց ստորագրությունները: Հետագայում կնքվել են պայմանագրեր, և ծառայությունները ընդունվել են օրենքով պահանջվող հանձնման-ընդունման ակտերում առկա վավերապայմանների առկայությամբ:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Հաշվեքննության ենթակա 498 հարկային հաշիվներից 132 հարկային հաշիվներ ընդունվել են առանց արդյունքի կատարման հաշվետվությունների, իսկ մնացած 366 հարկային հաշիվներին կից ներկայացված արդյունքի կատարման հաշվետվությունները համարվում են սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, որոնցում բացակայել են «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով սահմանված վավերապայմանները:

2.2.7. Պայմանագրեր չկնքելու վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշներ

Գնումը պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ **պայմանագիր կնքելու միջոցով** բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումն է («Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ):

Պայմանագիրը գնում կատարելու նպատակով կնքվող **գրավոր** գործարք է («Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ):

Պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական **իրավունքներ և պարտականություններ** սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մաս):

Պայմանագիրը կարող է կնքվել գործարքները կնքելու համար նախատեսված ցանկացած ձևով, եթե տվյալ տեսակի պայմանագիր կնքելու համար օրենքով որոշակի ձև սահմանված չէ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 450-րդ հոդվածի 1-ին մաս):

Նորմատիվ իրավական ակտը **չպետք է հակասի** հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մաս*):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ 1,269,080.0 հազ. դրամի չափով **130** գործարքների դեպքում մատակարարների հետ էՆ-ն **չի կնքել գրավոր պայմանագրեր**, որոնցում պետք է սահմանվեին կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Համավարակի սկզբում նշված գործընթացները կանոնակարգված չէին, և նախնական փուլում միակ իրավական հիմքը ՀՀ կառավարության 12.03.2020թ. №296-Ա որոշումն էր (այսուհետ՝ 296-Ա որոշում), որի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վճարման իրականացման համար հիմք են հանդիսանում դուրս գրված հաշիվ ապրանքագրերը:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 16.03.2020թ. №298-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի մարտի 16-ից ՀՀ ամբողջ տարածքում հայտարարված էր արտակարգ դրություն՝ խստորեն սահմանափակելով քաղաքացիների տեղաշարժը, ինչի արդյունքում բարդություններ էին առաջանում աշխատանքների կազմակերպման և ժամանակին իրականացման մասով, այդ թվում՝ անհնար էր նաև վճարման համար լրացուցիչ հիմք հանդիսացող փաստաթղթերի տրամադրումը: Բարդությունները կապված էին նաև հրատապ որոշումների կայացմամբ, անձանց կեցության ու կացության ապահովման հրատապությամբ, աշխատանքների կազմակերպման ապահովման մասով անբավարար ռեսուրսներով, հեռավար աշխատանքներով:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Վերը նշված ՀՀ կառավարության 12.03.2020թ. №296-Ա որոշման (այսուհետ՝ 296-Ա որոշում) 1-ին մասի 2-րդ կետը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին: Մինչդեռ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտը չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին:

2.2.8. Պայմանագրի անբաժանալի մասը կազմող համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշ

Պայմանագիրն **ուժի մեջ է մտնում** և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից (*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մաս*):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ ՀՀ ԷՆ-ն 31.07.2020թ.-ին Թուֆենկյան Հոսփիթալիթի ՍՊԸ-ի հետ կնքել է արտակարգ իրավիճակներում պետության կարիքների համար ծառայությունների մատուցման թիվ 243-20 պայմանագիրը և պայմանագրի կնքման օրը կնքել է նաև երկու համաձայնագիր: Մինչդեռ 243-20 պայմանագրով սահմանված է, որ պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, իսկ համաձայնագրերում սահմանված է, որ ուժի մեջ են մտնում ավելի վաղ ժամկետից, քան պայմանագիրն է: Արդյունքում, համաձայնագրերն ուժի մեջ են մտել մինչև պայմանագիր կնքելը:

ՀՀ ԷՆ-ի և Թուֆենկյան Հոսփիթալիթի ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում սահմանվել է դրույթ, որ պայմանագրով նախատեսված պայմանները կիրառվում են 2020թ. ապրիլի 12-ից ծագած հարաբերությունների նկատմամբ: Իսկ նույն օրը, 31.07.2020թ.-ին, այդ պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 243-20.1 և թիվ 243-20.2 համաձայնագրերով սահմանվել է դրույթ, որ դրանք ուժի մեջ են մտնում համապատասխանաբար 12.06.2020թ.-ից և 20.06.2020թ.-ից:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի հետ կորոնավիրուսային համավարակի տարածման կանխարգելման շրջանակներում համագործակցությունը սկսվել է 2020թ. ապրիլի 12-ից: Սկզբնական փուլում համագործակցությունն իրականացվել է ընկերության կողմից ներկայացված գնառաջարկի (4800 դրամ) և ճաշացանկի հիման վրա: Այնուհետև, մինչ ընկերության հետ պայմանագիր կնքելը, 2 անգամ փոփոխություն է կատարվել ընկերության ներկայացրած գնառաջարկում՝ նվազեցնելով այն մինչև 4000 դրամ:

2020թ. հուլիսին ընկերությանը առաջարկվել է կնքել պայմանագիր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության հետ համագործակցությունը սկսվել էր դեռևս 2020թ. ապրիլից և մինչև 2020թ. հուլիս ամիսը գնառաջարկում առկա են եղել փոփոխություններ՝ առաջարկվել է կնքել նաև համապատասխան համաձայնագրեր, որոնցով պետք է արտացոլվեին տեղի ունեցած գնառաջարկների փոփոխությունները: Համաձայնագրերում առկա է բովանդակային թերություն, մասնավորապես՝ համաձայնագրի համապատասխան դրույթներով նշվում է վերջիններիս ուժի մեջ մտնելու ամսաթիվ: Համաձայնագրերում ամսաթվերը նշելու նպատակը ոչ թե վերջիններիս ուժի մեջ մտնելը շեշտելն էր, այլ հստակեցնելը, թե որ ժամանակահատվածի վրա են տարածվում կատարված փոփոխությունները:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

«Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ն ԷՆ-ին ծառայություն է սկսել մատուցել 2020թ. ապրիլի 10-ից, այլ ոչ թե ապրիլի 12-ից, չնայած, որ կնքված պայմանագրում սահմանվել է կիրառել պայմանները 2020թ. ապրիլի 12-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2.2.9. Գնումների պլանով նախատեսված սահմանաչափերի չպահպանման վերաբերյալ

Հաշվեքննության չափանիշ

Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է (ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 16-րդ կետ):

Հաշվեքննության արդյունքներ

Արձանագրվել է, որ ԷՆ գնումների պլանով 55111300/1 ԳՄԱ կոդով «այլ հյուրանոցային ծառայություններ» գնման առարկայի գծով 2020թ. նախատեսված է եղել 1,808,970.2 հազ. դրամ գումար: Մինչդեռ, 2020թ. փաստացի մատուցվել է 1,834,557.2 հազ. դրամի հյուրանոցային ծառայություն կամ գնումների պլանով նախատեսվածից 25,587.0 հազ. դրամով ավելի (Հավելված 6 և 7):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումները

Գումարները նախատեսված են եղել 1 միասնական որոշումներով, ինչի արդյունքում դուրս գրված հաշիվ ապրանքագրերը շատ դեպքերում չեն արտացոլում մատուցված ծառայության տեսակը:

Հաշվեքննողների մեկնաբանությունը

Չի ընդունվել: Հաշիվ ապրանքագրերին կից ներկայացված հաշվետվությունների համաձայն ԷՆ-ն ունեցել է անհրաժեշտ տեղեկատվական հիմքեր՝ գնումների սահմանաչափի պայպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու համար:

Հաշվեքննության ենթահարց – 2.3. Արդյո՞ք հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի կողմից գնահատվել է հաշվեքննության առարկային վերաբերելի ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերի արդյունավետությունը

Հաշվեքննության չափանիշներ

Հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը («Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս):

Ներքին աուդիտի շրջանակը. Ներքին աուդիտի են ենթարկվում կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները («Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի):

Հաշվեքննության արդյունքներ

Հաշվեքննությամբ պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածում ԷՆ-ում չի գործել ներքին աուդիտի գործառույթ:

ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

ԷՆ-ի ֆինանսական կառավարման համակարգերում արձանագրված անարդյունավետության փաստերի, ներքին հսկողության թույլ միջավայրի և ներքին աուդիտի գործառույթի բացակայության պայմաններում ԷՆ-ի ֆինանսական հաշվետվություններում արձանագրվել են 3,363,360.4 հազ. դրամի չափով խեղաթյուրումներ, որոնք ներկայացվում են ստորև՝

1. Փաստացի ծախսերի և կրեդիտորական պարտքերի խեղաթյուրման վերաբերյալ

ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվություններում (Հ-2 և Հ-4) փաստացի ծախսերը և կրեդիտորական պարտքերը խեղաթյուրված են եղել 692,349.7 հազ. դրամի չափով

ՀՀ ֆինանսների նախարարի 13.03.2019թ. N254-Ն հրամանի (այսուհետև՝ Հրաման) հավելված N2-ի 7-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն, հիմնարկի ֆինանսատնտեսական գործունեության մասին հաշվետվությունը պետք է պարունակի թվային մաս հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հիմնարկի կրեդիտորական պարտքերի վերաբերյալ՝ օրինակելի ձև Հ-4-ին համապատասխան: Բացի այդ, Հրամանի հավելված N2-ի «Օրինակելի ձև Հ-2-ի լրացման պահանջներ»-ի 9-րդ և 10-րդ կետերի համաձայն, «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին» հաշվետվության աղյուսակի «ԺԱ – Փաստացի ծախս» սյունակում լրացվում են հաշվետու ժամանակահատվածում հիմնարկի⁸ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, ներառյալ՝ կրեդիտորների չվճարված հաշիվները, իսկ «ԺԲ – Ընդամենը վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր)» սյունակում լրացվում են տարեսկզբից, աճողական կարգով, մինչև հաշվետու ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածի ընթացքում տվյալ հիմնարկին՝ նրա կրեդիտորների կողմից ներկայացված վճարման պահանջագրերով պահանջվող հատկացումները՝ ներառյալ ԱԱՀ-ի գումարը: Պահանջվող հատկացումները համարվում են վճարման ենթակա՝

⁸ «Հիմնարկ» հասկացությունը ներառում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ու դրանց ենթակա հիմնարկները: Տվյալ դեպքում խոսքը գնում է ԷՆ-ի մասին:

վճարման պահանջագրերով այդ վճարումների իրականացման համար նախատեսված ժամկետի վերջին օրվանից սկսած: Կրեդիտորների կողմից ներկայացված վճարման պահանջագրերը **համարվում են վավերական այն պահից**, երբ տվյալ հիմնարկը **ընդունում է** պահանջագրին համապատասխան վճարումները իրականացնելու իր պարտավորվածությունը:

«1224-11001» միջոցառման մասով

2020 թվականին ԷՆ-ի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, **դրամարկղային ծախսերից բացի**, ներառել են նաև **19 կրեդիտորների** (<< 2020թ. պետական բյուջեի «1224-11001» միջոցառման շրջանակներում կեցության ապահովման ծառայություններ մատուցած կազմակերպությունների) 2020թ. դեկտեմբերի II կեսում (16.12.2020-31.12.2020թթ. ընկած ժամանակահատվածում) մատուցած **146,852.8 հազ. դրամ** ընդհանուր արժեքով ծառայությունների գծով 2020թ. ընթացքում **չվճարված 25 հաշիվներ** (ցանկը ներկայացված է աղյուսակ 9-ում), որոնք հանձնման-ընդունման արձանագրությունների ստորագրմամբ **ընդունվել են** ԷՆ-ի կողմից՝ **նախքան 15.02.2021թ.-ին** իր տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը (մասնավորապես՝ N1-23 հաշիվներն ԷՆ-ի կողմից ընդունվել են 2021թ. հունվար ամսվա ընթացքում, իսկ N24 և N25 հաշիվները՝ 2021թ. փետրվարի 4-ին և 5-ին, համապատասխանաբար):

Մինչդեռ, ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվությունում (<-2՝ «ԺԱ» սյուն) «1224-11001» միջոցառման գծով փաստացի ծախսը կազմված է եղել **միայն** դրամարկղային ծախսից (4,566,972.32 հազ. դրամ)՝ **չներառելով** աղյուսակ 9-ում նշված կրեդիտորների՝ ԷՆ-ի կողմից **ընդունված 146,852.8 հազ. դրամի չափով չվճարված և ստանձնված պայմանագրային պարտավորությունների համաձայն վճարման ենթակա** հաշիվների արժեքը:

«1224-12001» միջոցառման մասով

2020 թվականին ԷՆ-ի՝ համապատասխան փաստաթղթերով ձևակերպված իրական ծախսերը, դրամարկղային ծախսերից բացի, ներառել են նաև **16 կրեդիտորների** (<< 2020թ. պետական բյուջեի «1224-12001» միջոցառման շրջանակներում կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տրամադրված վարկերի 2020թ. դեկտեմբեր ամսվա տոկոսադրույքների սուբսիդավորման **545,496.9 հազ. դրամ** ընդհանուր արժեքով **չվճարված 16 ֆինանսական կառույցների հայտերը** (ցանկը ներկայացված է աղյուսակ 10-ում), որոնք գրությամբ **ընդունվել են** ԷՆ-ի կողմից՝ **նախքան 15.02.2021թ.-ին** իր

տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը (մասնավորապես՝ հայտերը ԷՆ-ի կողմից ընդունվել են 2021թ. հունվար ամսվա ընթացքում):

Մինչդեռ, ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվությունում (Հ-2՝ «ԺԱ» սյուն) «1224-12001» միջոցառման գծով փաստացի ծախսը կազմված է եղել **միայն** դրամարկղային ծախսից (2,318,075.4 հազ. դրամ)՝ **չներառելով** աղյուսակ 9-ում նշված կրեդիտորների՝ **545,496.9 հազ. դրամի չափով չվճարված հայտերը:**

Բացի այդ, ԷՆ-ի 2020թ. ֆինանսական հաշվետվություններում (Հ-2՝ «ԺԲ» սյուն և Հ-4) ՀՀ 2020թ. պետական բյուջեի «1224-11001» և «1224-12001» միջոցառումների գծով կրեդիտորական պարտքը ներկայացված է եղել **0 դրամ:**

Աղյուսակ 9

ԷՆ-ի 2020թ. կրեդիտորական պարտքերը «1224-11001» միջոցառման գծով

N	Հարկային հաշվի սերիա - համար	Կազմակերպություն	Ծառայության մատուցման ժամանակահատվածը	Ընդունման հանձնման արձանագրության ամսաթիվը	Ծառայության արժեքը
1	Բ6153722769	Լ.Փ. ԱՁ	21.12.20-31.12.20	12/31/2020	3,045,950
2	Ա8736801116	Ռեժինէ ՍՊԸ	16.12.20-31.12.20	1/8/2021	15,169,500
3	Բ9295558211	Ֆլեքս 20 ՍՊԸ	21.12.20-31.12.20	1/12/2021	12,219,600
4	Բ5594173465*	Էմ քի ջի գրուպ ՍՊԸ	21.12.20-31.12.20	1/13/2021	12,930,000
